

Днепропетровск

Угольный склад

насыпной

491.99-5
2-15

1909 г.

391077
-15

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Խոզքից
Գ. Դ. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Թ. Ի. Յ. Լ. Ի. Ս.
Տպարան „Պուլսուրան“ Ընկլ. Վեհամինովսկ. 18.
1910

6688

49/99-2

2-15

уф

370

2169-2U

10 MAY 2010
ELOS JUL 81
L.A.T.



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՒ

ՈՒՍՏԻՑՈՒՄԸ



Կազմեց
Գ. Դ. Շ. Ռ. Բ. Ա. Ն.

1004
15/11/8

— 3 —

ԹՐՅԵՐԸ

Տպորու «ԿՈՎԱՆԻՐ» լոկ. | Տիպոր. Թ-վա «ԿՈՎԱՆԻՐ»

Ֆելյումնովսկայ, 18.

1909

19 JUL 2013

ՕԴԸ
Ա. Հ. Ե. Պ. Խ.

ՄԱՅՐԻ ԼԵԶՔԻ ԹԱՍԻՑՈՒՄԸ *

I

Դպրոցներում իւրաքանչիւր տուարկայի ուսուցումն ունի իր որոշ նպատակը, որին հասնելու համար պէտք է ընթանալ այն ուղղութեամբ, որ ամենանպատակայարմարն է ճանաչւած մանկավարժական գիտութիւնից:

Աւանդելի առարկայի բուն նպատակին հասնելու համար զասատուն պէտք է ձգտի դպրոցական ուսուցումը գործնական և կենսական գարձնել. նա պէտք է աշխատի ընտրել ուսուցման, զասատութեան մի այնպիսի ճանապարհ, որ կարողանայ զարթեցնել մի կողմից աշակերտի մտաւոր կարսութիւնները՝ տալով նրան որոշ ուղղութիւն, միւս կողմից հաղորդել աշակերտին կեանքի համար արժէք ունեցող տեղեկութիւններ:

Մայրենի լեզուն է այն հիմքը, որի վրայ յաջորդ տարիներում կառուցելու է մանկան մտաւոր զարգացման ընդարձակ շէնքը: Որքան հաստատուն լինի այդ հիմքը, այնքան աւելի բարձրը, լայնարձակ և հաստատուն կլինի ամրող կառուցւածքը:

Ամենքի համար պարզ է, որ մայրենի լեզու ուսուցման գլխաւոր նպատակին հասնելու համար կարնոր է, որ այդ նպատակի համար գործադրող միջոցները՝ ընթերցանութիւնը և զրոյթիւնը, ուսուցման այս երկու կարևորագոյն տարրերը, աւելի պարզ արտայատած՝ բանաւոր և գրաւոր պարապմունքները, կամ, ինչպէս ժողովուրդն է տուում, կրարկալ-զրկելը զորս գանիրնց անցեալ շարլուն, տարարդիւն վիճակից և ընթանան նորոշոյն մանկավարժութեան ճանապարհով:

Այս երկու տարրների մէջն է մայրենի լեզու դաստանդու-

*) Օգտել ենք „Педагогические этюды“ И. И. Троицкого, 2) „Методика учебныхъ предметовъ начальной школы“ К. Смирнова, 3) „Чему и какъ учить на урокахъ родного языка въ начальной школѣ“ Д. И. Тихомирова և այլ աղբիւրներից:

թեան ամրող գաղտնիքը, մանաւանդ մաքի գարվացման առաջին կինդրոնացման շրջանում, այսինքն տարրական զալոցում և միջնակարգ գոլոցների ստորին գասարաններում, և եթէ այդ տարրերը ձեռք բերեն իրենց կատարելութեամբ, գոլոցը լիովին կատարած կինի իր գերը, որովհետեւ նա, բացի աշակերտին զարգացում, գիտութիւն, որոշ սովորութիւններ և հմտութիւններ տալուց, միենոյն ժամանակ լաց կանէ, կպարզէ նաև աշակերտի առաջ ամրող խորութեամբ և լիովիթեամբ մատչելի յօդւածը, գրեթէ աշակերտին իրապէս «գրագէտ» կդարձնէ, որով և նրան հնարաւորութիւն կտայ ապագայում ընթերցանութեան միջոցով լրացնել իր կրթութիւնը և գարվացումը,

Այժմ հարց է առաջ գալիս, թէ արդեօք մեր գոլոցներում գասաւանդութիւնը ցանկալի տղութեամբ է տեղի ունենում, գոլոցներն իրենց այժմեան գասաւանդման ընթացքով ուսուցման երկու տարրերը՝ կարդալ-գրելլ ծառայեցնում են բուն նպատակին: Խօսենք դրանցից իւրաքանչիւրի մասին առանձին-ասանձին:

—

Կարդալ սովորեցնել, այս ասելով ժողովուրդը միայն սոսկ մերենայական ընթերցանութիւն չի հասկանում, մանկավարժական աշխարհն ել կարդալ բառը հասկանում է այդ բառի ամենաընդարձակ մաքավ, այն է՝ սովորեցնել աշակերտների ընթերցանութեան միջոցով ընդունելու, իւրացնելու այն մաքերը, որ արտայայտած են գրւածքի մէջ ինչպէս առանձին մասերում, հոյնապէս և նրանց արտամարանական ամրողութեան մէջ, որովհետեւ այդ է ցանկանում հեղինակը և, որքան հնարաւոր է, հոյնապէսի պարզութեամբ որ այդ մաքերը նկարագրւած են հեղինակի կողմից:

Մեզանում ոչ միայն տարրական, այլ և յաճախ միջնակարգ գոլոցները բնաւ չեն սովորեցնում աշակերտներին կարդալ այնպէս, ինչպէս հարկաւոր է, չեն սովորեցնում նաև մաքերն արտայայտել, նկարագրել չեն սովորեցնում միանգամից ըմբռնելու, իւրացնելու կարգացածն իր հիմնական գաղափարով. այդ գաղափարը ներկայացնել պատկերաւոր կերպով, նրան իրեն սեփականութիւն գարձնել և գրա շնորհիւ այդ գաղափարին արտայայտութիւն տալ իր սեփական մաքերով:

Գոյութիւն ունեցող բոլոր գոլոցներում, մինչև իսկ միջնակարգ գոլոցների բարձր զասարաններում կարգացածն աշակերտները հաղորդում են հենց ուղղակի յիշողութեամբ, մատքե-

բելով յաճախ միայն գիտողական յիշողութեամբ մէկ-մէկու յաջորդող նախադասութիւնները, մտքերը:

«Երկու տեսակի ընթերցողներ կան» — ասում է ժուկովսկին, «ոմանք փակելով իրենց կարգացած զիրքը, նրա մասին մութ և լուրզովին սխալ հասկացողութիւն, գաղափար են կազմում, այդ տեղի է ունենում կամ կապակցութիւններու անուղղութիւնից, կամ որոշ չափի անտարբեկութիւնից, որ խանգարում է այդպիսիներին հետեւ ուշագրութեամբ հեղինակի մտքերին և բմբռնել աղաւորութիւնները: Միւնները կարգում են և խորում, զգում, նիստում զինիցիկը, տեսնում են թերութիւնները, սխալ-ները, — և նրանց զինում մնում է կանոնադր, վականուր նաև կացողութիւն այն մասին, ինչ որ կարգացէլ ին: Այս վերջին տեսակի ընթերցողների թիւը մեր գոլոցական կեանքում շատ և շատ չնչին է, այդպիսիները մեր գոլոցական կեանքի ախուր իշրականութեան մէջ բացառութիւններ են:

Մեր բոլոր զոլոցներում, առանց բացառութեան, յաճախ ոչ միայն մի անգամ կարգացած յօդւածը, այլ մինչև իսկ միքանի անգամ կրկնած և արդէն սովորած գասն աշակերտները հաշորդում են մեծաւ մասամբ ասանց կարգացածի, հեղինակի նկարովքած ընդհանուր պատկերը կամ որեէ ձշմարտութիւն պարզանող գատողութիւնների միջն եղած բանաւոր կապը պատկերացնելու, ըմբռնելու. Նրանք բացառապէս տեսնում են իրենց առաջ միայն բաց արած գրքի որոշ տեղերը, ուր գրւած են որոշ նախադասութիւններ: Այլ խօսքերով, զասի իւրացումը, կարգացի բմբռնումը նրանց մէջ հիմնաւորուում, հաստատում է ոչ թէ բնական զուգորդութիւնների, ոչ թէ նմանութեան կամ հակազարութեան զուգորդութիւնների, այլ բացառապէս գրքի, յօդւածի տեղի զուգորդութիւնների վրայ: Այդպիսի իւրացումը, ի նարկէ, բացառատպէս ոչինչ տալ չի կարող աշակերտն, բացի նրա հոգեկան աշխարհի հետ ոչնչով չկապւած անիմաստ, անխորհուրդ նիւթից, այդ պատճառով էլ այդ եղանակով «իւրացը նիւթիւրը» միշտ պատրաստ են թաշել կորչել, անհետ չքանալ նրա զիսից:

Ահա թէ ինչու մեր զոլոցների աշակերտներն այնպէս շուտ մուանում են զոլոցում ձեռք բերած նիւթերը, ահա թէ ինչու այնպէս յաճախ նրանց մէջ «անգիր աներ» պահանջ է առաջանում, զոլոցը չի տվորիցը նրանց կարդալ, նրանց միջոց, կարողութիւն չի տվել խելացի կիրազով իւրացնելու արտած զայր և ասդրուել այն իր սեփական մորքերով: Եւ որովհետեւ «իւրացը անշիր գիտութիւն, — ասում է Բարտէսը իր «Մանկավարժա-

կան հոգերանութիւնը ըստ կօստիք աշխատութեան մէջ, —որ ձեռք է բերւած առանց որևէ հասկացողութեան, ներկայանում է իրրե մի մեռած դրամագլուխ, որ թթացնում և սպանում է ոգին», և ոչ թէ զարգացնում նրան, այդ պատճառով հասկանալի է, թէ ինչու մեր զարգոցների աշակերտները ստանում են այդպիսի թուլ զարգացում:

Սակայն ի՞նչու համար դպրոցը չի սովորեցնում կարդալ և կարգացածը իր սեփական մաքերով արտայայտել ինչու դպրոցը չի աշխատում գոհացում տալ իր առաջ դրած այդ էական իր զարդին: Զէ որ մայրենի լեզվի ուսուցման հիմքն, ինչպէս տարրուկան դպրոցում, ուսունակէս և միջնակարգ դպրոցների ստորին դասրաններում կազմում է բացառութական ընթերցումից, որը չէնց անմիջական նպատակ ունի համեմու գիտակցական ընթերցանութեան, այսինքն այնպիսի ընթերցանութեան, որի ժամանակ աշակերտն ազատ կկարողանայ հազորդել կարդացածն իր սեփական մաքերով: Եւ չնայած այդ բանին, դպրոցն այնուամենայնին դարձալ չի կարողանում համեմել այդպիսի գիտակցական ընթերցան:

Ի՞նչն է արգեօք իսանգարում յիշեալ և, ըստ երեսյթին, միանգումայն հասանելի նպատակի իրականացմանը:

Այս հարցը լուծելու համար մեզ անհրաժեշտ է թէկուզ և համառոտակի քննութեան առնել բացարական ընթերցման ժամանակակից դրութիւնը, իսկապէս այն մեթոդը, դասաւանդման այն եղանակը, որ առաջարկում է որոշ մանկավարժների կողմից իրրե ձեռնարկ և, որի համաձայն ներկայումս տարւում է բացարական ընթերցանութիւնը:

Այդ մեթոդը կայանում է սրանում. աշակերտը կարգում է յօդւածը. վերջանալուց յետոյ ուսուցիչն աշակերտին մի շարք հարցեր է տալիս, որոնք նպատակ ունեն նախ և առաջ պարզելու նրան յօդւածի բովանդակութիւնը, իսկ երկրորդ՝ հնարաւոր թիւն տալ աշակերտին իրացնելու կարգացածը: Աշակերտը հազորդում է յօդւածի բովանդակութիւնը համաձայն ուսուցչի կողմից արւած հարցերի և, վերջապէս, այդ բոլորից յետոյ որդէն արտայայտում, հազորդում է յօդւածն իրրե կապակցաւ մի պատճենին: Անտ այնպէս է իրացնում կարգացած մի նիւթը իրացւած է համարւում, այնուհետև յանձնարարում է շահեցնել այդ աշակերտի հոգեկան ուժերի և լեզվի զարգացման համար, համեմատել կարգացածը նախկին կարգացածի հետ, փոփոխել համաձայն արւած պլանի, գուրս բերել մասնաւոր և դրւիսոր մաքերը, կազմել կարգացածի պլանը և այն:

Այդպիսով մեթոդի էութիւնը՝ հետեւեալն է, նախ և առաջ ստիպել աշակերտին մի շարք հարցերի միջացով իրացնել կարգացած նիւթը, իսկ երկրորդ՝ աշխատելով աշակերտների հետ այդ նիւթի վրայ, զարգացնել նրանց լեզուն և հոգեկան կարողութիւնները:

Այժմ եթէ մենք համեմատենք այն նպատակը, որ զնում է իր համար բացարական ընթերցանութիւնը, այսինքն գիտակցական ընթերցանութեան համեմու և այն նպատակը, որին նա հետամուտ է այդպիսի պայմաններում, կտևնենք, որ բացարական ընթերցանութիւնն աչքաթող է անում ամենակարեռը, ինչպէս օրինակ, աշակերտներին գիտակցական ընթերցանութեան վարժեցնելը, մի բան, որ այնքան կարեոր է աշակերտին կարգացածի մէջ որոշ բովանդակութիւն անունելու համար: Մեզանում, ընդհակառակը, ստացում է այն, որ աշակերտը կարգում է յօդւածը անզիտակցարար և միայն յետոյ, ուսուցչի հարցերի միջոցով պարզաբանում է իրեն համար և իրացնում նրա բովանդակութիւնը, այնպէս որ ոչ կարգարու ժամանակ և ոչ էլ կարգալուց է ստեղծում աշակերտի հոգու մէջ կարգացածի պատկերը, այլ կարգալուց, ուսուցչի հարցերից յետոյ (թէպէտ այդ էլ հարց է, թէ արգեօք գոյանում է աշակերտի հոգու մէջ մի այդպիսի պատկեր): Ոչ թէ կարգալու ժամանակ է աշակերտը նկատում և ըմբռնում որոշ կազ ձշմարտութիւն ալտայայտող զատողութիւնների միջև, այլ ուսուցչի դատողութիւններից յետոյ: Բայց այդ գէպքում հարց է ծագում, թէ ի՞նչ նշանակութիւն ունի ընթերցանութիւնը, ի՞նչ նպատակի է նա ծառայում, ի՞նչ է ուսուցանում աշակերտին:

Գուցէ անհնարին է պահանջել տարրական զարոցի աշակերտներից, որպէսզի նրանք կարողանան գիտակցարար վերաբերել կարգացածին և հասկանալ կարգացածը: Սակայն մենք կարծում ենք, որ զրա հետ գժւար է համաձայնել, թէպէտ և, հաւանական է, որ հէնց իրենք, մեթոդիկաների հեղինակները, որոնք և իրր ընդունել են այդ իրենց ձեռնարկներում, կասեն, ոչ, համարաւոր է: Կարծում եմ, որ ոչ ոք չի տալիս աշակերտին կարգալու նրա հասկացողութեան համար խիստ զժւարին, անմատչելի, նրա ուժից վեր որևէ նիւթ, բայց այդ գէպքում մի տուրքինակ հարց է առաջ գալիս, թէ ինչու աշակերտը չի հասկանում այդպիսի նիւթը կարգալիս:

Այդ հարցին պատասխանեն այնքան էլ զժւար չէ. չի նախանաւում, որովհետեւ առաջ նրան միշտ սովորիցնելիս են երեխ կորպալ անզիտակցարար: Աւսուցիչը երբէք չի ձգտել ուզգելու, կենցրոնացնելու նրա ուշադրութիւնը և ներքին աշխարհը

կարգալուց առաջ կարգացածի վրայ և այդպիսով կարծես թէ իրախոսութիւնը վարժեցրել է նրան անզիտակցական ընթերցանութեան:

Սակայն ինչպէս էլ որ աշակերտը կարդայ յօդւածը, ուսուցչի համար անհրաժեշտ է, որպէսզի նա իւրացնէ կարգացածը, հակառակ դէպքում ինչ նշանակութիւն է ունենալու կարգացածը և ինչի վրայ նա պէտք է վարժեցնէ աշակերտի հոգեկան կարողութիւնները: Իւրացնելու համար ընդունւած է մեր դպրոցական կեանքում, ինչպէս մենք տեսանք, մի շարք հարցեր տալ աշակերտին: Սակայն միթէ ուսուցիչների հարցերի միջոցավ միայն աշակերտն ընդունակ կլինի կատարելապէս իւրացնել կարգացածը: Յաճախ շատ հեղինակների փոքրիկ՝ ոչ աւելի քան տասը նախադասութիւնից բաղկացած յօդւածի իւրացման համար ուսուցիչն աշակերտներին ուղղում է երկու երեք տասնեակ հարցեր, որոնց միջով մենք կասկածում ենք, թէ դասատուն հնարաւորութիւն ունենայ ամրողապէս իւրացնել տալ կարգացածը: Սակայն տեսականապէս տրամադիր ենք կարծելու, որ եթէ աշակերտներն ընթերցանութեան ժամանակ մինչև իսկ ըմբռնել են կարգացածը, պարզ կերպով պատկերացրել են նկարութիւն պատկերը, գուցէ և հոգով տարել իրենց յիշողութիւնների մէջ դէպի այն նոյնանման իրական պատկերը, որպիսին երբ և իցէ տեսել և զգացել են,—մինչէ իսկ այդ դէպքում էլ լույս երկու-երեք տասնեակ հարցեր և պատասխանելով նրանց բոլորին, մեզ թւում է, թէ աշակերտը կրթանայ և կմուսանայ այն բոլորը, ինչ որ կարդացել են: Այսպէս որ այդքան թւով հարցերը ոչ կնպաստեն նիւթի իւրացմանը և ոչ էլ նրա բովանդակութեան պարզաբանմանը, աւելի շուտ պատճառ կդառնան կարդացածի բովանդակութիւնը մինչանը մինչէ իսկ մուսնալու:

Չենք վիճում, որ աշակերտները, գուցէ որոշ բառերի, այս ու այն մաքի վերաբերեալ հարցերի բացարութիւնները տան Սակայն այդ բոլորն ինչ կազ ունեն այս կամ այն գեղարւեստական-բանաստեղծական աշխատութիւններն ըմբռնելու և յիշութիւնն մէջ իւրացնելու հետ, ինչպէս կարող են աշակերտները հարցերի միջոցով զգալ բանաստեղծական, գեղարւեստական պատկերների նկարագրութեան ամրող գրաւչութիւնը:

Այսպիսի բացարական ընթերցանութիւնը ընտան չի տարբերում միաժամանակ բարօն Կօրփի մեթոդիկայով առաջարկւած եղանակից, երբ զատի ժամանակ իւրաքանչիւր բարի պատճառով մի ամրող ժամ բացարարութիւններ էին տեղի ունենում:

Ի՞նչպէս կարելի է արժեքաւոր, պարզ գուղափար կարմել մի

պատկերի մասին, որը ցոյց է տրւում մաս մաս: Գեղարւեստական ստեղծագործութիւնը նման է մի պատկերի, այն, որի միայն մասերին ծանօթ աշակերտն ամրող չութիւնը պատկերացնել, երեւակայել չի կարող:

Այժմ անշուշտ ընթերցողը հարց կտայ, եթէ ուսուցչի հարցերը չեն կարող լիակատար կերպով ըմբռնել տալ կարգացածը, այն դէպքում ինչի վրայ պէտք է աշխատի ուսուցիչը աշակերտների հոգեկան կամ կարողութիւնները, լիզուն:

Ակներն է, որ այստեղ առաջ է գալիս մի մեծ թիւրիմացութիւն: Մեթոդիկայի ձեսնարկներն կազմովներն առանց պարզելու իրենց համար այն, թէ ինչ աստիճանի հսարաւոր է կարգացածի ամրողջական իւրացումն ուսուցչի հարցերի միջոցավ, հրատարակեցին բացարական ընթերցանութեան վերաբերեալ իրենց թէօրին:

Վերջերս Տրօստնիկովը իր «Օծունութեան» պարունակութիւնում առաջարկում առաջարկելով ընթերցանութեան ժամանակ իսկ լուսութափանում է, որ այդ ձանապարհներն աշակերտին պարզ և լիակատար հասկացողութիւն չեն տալիս կարգացած յօդւածի մասին, որ «յօդւածը, —ինչպէս ասում է նա, —լիակատար կերպով չի կարող հասկանալի լինել, որքան էլ որ նա լու բացարաւած լինի», և որ «ուսուցիչը վատ վարւած կլինի, եթէ որ աշխատի որպէսզի երեխանները միանկամից ամեն բան հասկանան»:

Ի՞նչպէս տեսնում ենք, Տրօստնիկովը պարզ խոստվանում է, որ հենց իր ասածարկած եղանակներով ուսուցիչը չի կարող ձեռք բերել գիտակցական ընթերցանութիւն, նա միայն ոպանում է ժամանակը: Այդ պատճառով նա խորհուրդ է տալիս զիմել ժամանակի օգնութեան: «այսօր անհասկանալի է, —ասում է նա, —հասկանալի կգառնայ երկու-երեք ամսից յետոյ»: Նա խորհուրդ է տալիս միենոյն յօդւածը կարգալ կրկին մի ամսից յետոյ, ապա գործեալ իւրաքանչիւր երկու-երեք ամսից յետոյ կրկնել, թերև մի օր հասկանան:

Եյս բոլոր համառօտ կերպով առաջ բերած տեղեկութիւններից երեւում է, որ մեթոդիկանների հսկինակների կողմից հսարաւ ինչ որ ենթադրութիւնների և գուշակութիւնների վրայ, կամ աւելի ճիշտն ասած, ոչնչի վրայ չհիմնած ժամանակակից բացարական ընթերցումն ունենում է ոչ թէ զրական, այլ ընդհակառակը, բացարական հետեանքներ, որովհետեւ չի սովորեց-

նում աշակերտներին բանաւոր, գիտակցական ընթերցանութիւն։ Մի խօսքով այժմեան եղանակով բացատրական ընթերցանութիւնը չի պարզաբանում աշակերտի համար կարդացածը, այլ մթնոցում է նրա միտքը։ Եւ կասկած չկայ, որ բանի բացատրական ընթերցանութիւնը դրւած կլինի զպլոցներում այսպէս, վերջիններս անշուշտ երբէք չեն համար այն նպատակին, որոնց ձգուում են բացատրական ընթերցանութեան միջոցին, բայց որոնց կարելի է եւ պէտք է ծնոր բերել, եթէ լաւատութեան գործը բացինալ իմբերի վրայ լինի դրաւձ։

Այս բոլորից յետոյ անշուշտ ընթերցովը հարց կտայ, ապա ինչպէս պէտք է տանել բացատրական ընթերցանութիւնը, որպէսպի նա կատարելապէս ծառայած լինի նպատակին, որպէսպի այդ ընթերցումը իսկապէս որ սովորեցնէ աշակերտներին գիտակցարար կարդար, սովորեցնէ նրանց տարրերել հէնց ընթերցանութեան միջոցին էականը երկրորդականից և կրթէ նրանց հոգին, զարգացնէ միտքը, լեզուն։

Այս հարցերի պատասխանն է տալիս Ի. Ի. Տրօհանովսկին իր «Պедагогические этюды» աշխատութեան մէջ, որի մասին և կարիոր ենք համարում մի բանի խօսք տուի։

II

Վերե առաջ բերւած բացատրական ընթերցանութեան վերաբերեալ հարցերն Ի. Ի. Տրօհանովսկին աշխատում է լուծել ոչ թէ ենթադրութիւնների և կարծիքների, այլ այն հոգեբանական տեհանների հիման վրայ, որ մշակել է ներկայումս ընդհանուր և էկոպերիմենտալ հոգեբանութիւնը։

Նախ և առաջ նո որոշում է մի այսպիսի հարց, ինչու համար աշակերտը կարգալով իրեն միանգամայն հասկանալի, միանգամայն մատչելի պատմութիւն, յօդւած, յաճախ նամիւնալ և իւրացնել չի կարողանում այդ, ուստի և անկարող է լինում պատմել հազորդել կարգացածի ընթերցանութիւնը։ Այսուհետ համար ներացնել բառերը յատկապէս շեշտում ենք նրա համար, որ այն ենթագրութիւնը, թէ աշակերտը կարդացածը հասկացել է, բայց հոգորդել չի կարող ոչ մի հիմք չունի։ 10—12 տարեկան երեխան արդէն այն աստիճան ական աիրապետում է լիդին, որ կատարելապէս կարող է հազորդել իրեն հասկացու-

դութեան մատչելի ամեն մի յօդւած, զրւածք։ Եթէ պատմեք դուք նրան մի այդպիսի յօդւածի բովանդակութիւն, նա հիանալի կհաղորդէ ձեր ամբողջ պատմածը, այս, կհաղորդէ, կպատմէ, որովհետև հասկացել է։ Վերջապէս ոչ միայն 10 տարեկան, այլ նոյն իսկ կատարելապէս լիզուն չափապեսող 3—4 տարեկան երեխան անգամ իր գիտակցական թոթովանքով կարողանում է հազորդել մօր պատմած հէքիաթը։ Վերջապէս լոեցէք նոյն աշակերտներին զասից գուրս, խօսակցութեանց ժամանակ, անսէք, թէ ինչպէս նրանք սահուն և պարզ կերպով հազորդում են մէկ մէկու բովանդակութեամբ համեմատաբար աւելի դժւարին բաներ, քան որեէ պատմւածք, յօդւած։ Այսպիսով, ուրիշն, կարգացածը հազորդելու անկարողութեան պատճառը թագնւած է բացառապէս այն հասկանալու, չըմբռնելու մէջ։

Այժմ մի այլ հատարացքիր հարց է առաջ գալիս, թէ ինչու նոյն պատմութիւնն ուրիշի բերանից լսելով, նա հասկանում է, իսկ երբ ինքն է կարգում, չի հասկանում։ Դրա պատասխանն այս կարող է լինել որովհետիւ, լսելով որիշի խօսքերը, նա լսում է, —ինչպէս ասում է Սելլին, —«իրեն նախանալի կինդանի նեշիններ, որնցով նա խորում է», կարդալիս նա տեսնում է թղթի վրայ որոշ նշաններ, արտասանելով է նրանց, ամրայի նրա նախոր կենդանի նեշիններ չին դառնում, որովհետիւ, բերով ուրիշի պատմւածք, նա թանձրացեալ կերպով պատկերը, տեսնում է նրան իր հոգու մէջ, իր ներքին հայեացքով և նրա վրայ նայելով հէնց կարողանում է պատմել նրա մասին այն ամենը, ինչ որ տեսնում է, կարգացածը չի մտնում նրա գիտակցութեան մէջ, չի առեն այդ պատկերը։

Այժմ մեզ համար պարզ է, որ մեր առաջին հոգու պէտք է լինի ընթերցանութեան ժամանակ ուշագրութիւն դարձնել այն հանգամանքի վրայ, որպէսպի թղթի վրայ պատկերացրած, նկարագրած խօսքի խորհրդանշանն արտասանութեան ժամանակ աշակերտի համար ներկայանաց իրեն կենդանի խօսք, որի հետ միասոին անմիջական կերպով կառաջանայ նրա հոգու մէջ այդ խօսքի հետ կապւած մտապատկերները։

Ցաւօք սրտի պէտք է տուի, որ մինչեւ այժմ էլ այն հարցը, թէ ինչպէս «աեաքով ատրօրինակ, անմիտ, ինչպէս ասում է Սելլին իր «Օպերկո ու ուսուուրութեան մէջ, —խօսքի սիմուլ ապազրւած թղթի վրայ փոխարինուում է երեխայի համար կինդանի հնչինի, որը նրա աչքում պատկանում է հէնց իրեն առարկային և մտնակցում է նրա կեանքում, գես երբէք, որքան ինձ յայտնի

է (աւելացնում է նաև), չի ուսումնասիրւած»: Անշուշտ, երբ այդ հարցը հոգերանութեան մէջ ձիշտ կերպով կփարզպարանւի, այն ժամանակ, յենւելով նրա գիտական հիմունքների վրայ, ամենքի համար զիւրին կլինի որոշել այն ձանապարհը, որ անմիջական կերպով տանում է գէպի գիտակցական ընթերցանութիւն:

Սակայն թէպէտ և ներկայումս այդ հարցը դեռ չի հիմնաւորած, այնուամենայնիւ ճիշտ կերպով հաստատած են էկսուերիմէնտալ տւեալների հիման վրայ այն միւս հարցերը, որոնք պակաս կարեոր չեն գիտակցական ընթերցանութիւնն համելու վերաբերեալ հարցի լուծման համար, որանք են կարդացածն իւրացնելու այն անհրաժեշտ և ամենալաւ պայմանները, որոնց եղած գէպքում «անմիտ խորհրդանշանները» դառնում են կենդանի հաշիւններ, որոնց ներկայութեամբ կենդանի հաշիւնները կարգացողի հոգու մէջ առաջ են բերում կարդացածի պարզ պատկերը, որ հաստատուն կերպով ամրապնդում է նրա հոգու մէջ:

Կարդացածն իւրացնելու այդ անհրաժեշտ և ամենալաւ պայմանների քննութեամբ հէնց զրադէլու ենք այժմ:

Անկասկած, ընթերցանութեան ամենարարձր արդիւնաւորութիւնը ձեւք կրերէի այն ժամանակ միայն, երբ աշակերտը յօդածի ընթերցանութեան ժամանակ իւրապէս որ կանցկացնէ այն բոլոր հոգեկան զրութիւնները, որոնց միջոցով տանել էր ուզում նրան հեղինակը, երբ աշակերտը կըմբռնէ, կպատկերացնէ և կզայց այն ամենը, ինչ որ բմբռնել, պատկերացրել և զզացել է հեղինակն իր աշխատութիւնը զբելիս: Անա այս կլինի ընթերցանութեան ամենարարձր գիտակցութիւնը: Այդպիսի ընթերցանութեան ենք մենք ձգտելու իւրաքանչիւր յօդւած աշակերտին կարդացնելիս, որովհետեւ այդ գէպքում կարդացածը ոչ միայն կիւրացւի աշակերտի կողմից իր ամբողջութեամբ, այլ և հաստատուն կերպով կամրանայ նրա հոգու մէջ կապւելով զանազան ժամապատկերների և զզացմունքների միջոցով նրա հոգեկան աշխարհի հետ:

Այսպիսի ընթերցանութեան համել կարելի է միայն որոշ պայմաններում, որոնք և իւրաքանչիւր ուսուցիչ պէտք է ի նկատի ունենայ բացատրական ընթերցանութեան դասի ժամանակ:

Այդ պայմաններից առաջինը, առանց որի աշակերտի հոգու մէջ երբէք որիէ ժամապատկեր և բմբռնողութիւն առաջանալ չի կարող, աշակերտին է: Ամեն որ գիտէ, որ երբ մենք հայում ենք որիէ տառարկայի, նրա հետ միասին տեսնում ենք նաև բոլոր նրան շրջապատողները, առկայն մեր գիտակցութեան մէջ մբռնում է միայն այն, որի վրայ զարձած է մեր ուշագրութիւնը.

բոլոր միւսները հետք թողնելով մեր հոգու մէջ, չեն մանում մեր զիտակցութեան մէջ: Այսպէս, օրինակ, կարգալով զիրքը, մենք մեր աաջի տեսնում ենք մի ամբողջ երես, նրա վրայ գրւած բուրը բառերը, բայց զիտակցում, հասկանում ենք միայն այն բառը, որ կարգում ենք, մնացած բոլորը մնում են մեր զիտակցութիւնից դուրս: Բոլորովին նոյնն է նաև յօդւածի ընթերցանութեան ժամանակ, նրա բովանդակութիւնը միմիայն այն գէպքում կարող է անցնել աշակերտի գիտակցութեան մէջ, եթէ նրա ուշագրութիւնն ամբողջապէս ուզգւած կլինի յիշեալ յօդւածի ըմբռնման վրայ:

Այսպեղից պարզ երեսում է, որ առաջինը, որի մասին պէտք է հոգ տանի ուսուցիչը, այդ այն է, որ պէտք է նախապատրաստել և կենդրուացնել աշակերտի ուշագրութիւնը կարգացւող յօդւածը ըմբռնելու, իւրացնելու համար, իսկ դրա համար նա նախ և առաջ պէտք է վերացնէ այն բոլոր պատճառները, որոնք գրաւում են աշակերտի աշագրութիւնը: Այդ պատճառները կարող են լինել երկու տեսակ: արտաքին և նիրքին: Առաջին տեսակ պատճառների մասին աւելորդ է խօսելը, որովհետեւ այդ պատճառները համարեա միշտ նախատեսնած են զպրոցում, և եթէ երբեմն աշակերտի ուշագրութիւնը որիէ թրիկոց, ազմուկ, բաց լուսամուտ և այլ պատճառներ ցըւում են, ուղարաքար ուսուցիչն անմիջապէս վերացնում է այդ խանգարմունքը և վերջապէս, նրանք չունեն էլ այնպիսի էականապէս կարեոր նշանակութիւն: Առաւել մեծ նշանակութիւն ունին երկրորդ տեսակի՝ ներքին պատճառները:

10—13 տարեկան աշակերտն այն աստիճան գեռ անսովոր է կառավարելու իր ուշագրութիւնը, որ նրան գժւար է իր ցանկութեամբ կենդրուացնել այդ վերջինն այն բանի վրայ, ինչ որ պահանջում է զամբը, օրինակ, իր կամ յաճախ իր ընկերոջ կարգացած յօդւածի վրայ: Եւ ակամայից, —որի համար նրան երբէք չի կարելի մեղագրել, առաւել ևս միաւոր նշանակել, ինչպէս այդ գործադրում է, —նրա ուշագրութիւնը, քանի որ նա չի հետաքրքրուում կարդացածով, գրաւում է այն զաղափարներով, մատապատկերներով, այն նիւթով, որն այդ վայրկեանում կայ նրա հոգու մէջ: Միթէ զպրոցներում մենք ամեն ժամանակ չենք հանդիպում այնպիսի աշակերտների, որոնք հիանալի նստած են լինուում զաղափարնում և ըստ երեսյթին հիանալի էլ լսում են, մատաւանդ երբ ուսուցիչը խիստ է լինում, ստկայն վերջ ի վերջոյ այգալիսին ոչինչ, կամ, յամենայն գէպս, շատ քիչ բան է ձեռք բերած լինում դասից, արդիւնքն այն է լինում, որ զան ապար-

զիւն է անցած լինում աշակերտի համար. ի՞նչու, որովհետեւ ուսուցիչը հոգու տանելով ուշադրութիւնը ցրող արտաքին պատճառների վերացման մասին, բոլորովին անուշադրութեան է մատնել կարեռագոյնը՝ ներքին պատճառները:

Ահա այդ պատճառով ուսուցչի առաջին հոգու պէտք է լինի աշակերտների հոգու միջից հեռացնել այն գաղափարներն և մտապատկերները, որոնք այդ վայրի հանում հրապուրիչ ներգործութիւն են ունենում նրանց ուշադրութեան վրայ և նրանց փոխարինել այդ գաղափարներով և մտապատկերներով, որոնք անհրաժեշտ են ուշադրութեանը մի այլ ցանկալի, յօդւածըն ըմբռնելու համար նպաստաւոր կողմն ուղղելու: Այս նպատակին հանելու միջոցների մէջ առաջինը «ներշնչումն է»:

«Սպասողական արամագրութիւնն ամենանպաստուոր պայմանն է ուշադրութեան», ասում է Նէշանիլը՝ «Современная экспериментальная психология в ее отношении к вопросам школьного обучения» аշխատութեան մէջ. «Կարելի է նոյն իսկ աւելին տակ, սպասելը, ակնկալելը ներկայանում է կամաւոր ուշադրութեան էտական պայմանը. այդ պատճառով ամենալով ստեղծել դասարանում ուշադրութեան համար աւելի նպաստաւոր, բարեհամագրութիւն, ուսուցիչը պէտք է աշխատի աշակերտների մէջ առաջ բերել սպասողական արամագրութիւն այն բանի, ինչ որ ինքն է տակելու (կամ այն բանի, ինչ որ իրենք են կարդալու): Սակայն արամագրութիւնը չպէտք է լինի որևէ անորոշ բանի համար:

Այս նպատակով ցանկալի է, որ աշակերտները որոշ մտապատկերներ ունենան կարգալու նիւթի մասին: «Եթէ աշակերտը, — ասում է Նէշանիլը, — միշտ իր առաջ որոշ հարց ունի զրուած, որի պատասխանը սպասում է ուսուցչի կողմից (կամ, առեւցնենք, զրբից), այդ նրա ուշադրութեան ամենալաւ զրաւելիանը կըլինի»:

Սակայն զրանով զեռ չի վերջանում ներշնչման և նրա հետ կապւած սպասողական արամագրութեան ամբողջ նշանակութիւնը: Կայ նաև մի կողմ, այդ նետարրրութիւնն է, որը առաջ է զուլու աշակերտի մէջ որոշ երեսյթի սպասելու, ակնկարելու պէտքում: Այս մասին, թէ ինչ նշանակութիւն ունի հաստաքըքրութիւնը կարգացնելու համար, աւելորդ է խօսելը, բաւական է միայն տակ, որ Գերմանիայի համարեա բոլոր աչքի ընկնող մանկավարժները նետաքրքրութիւնն ընդունում են ամենայն ահսակ յաջող ուսուցման միջոց: Առաջ բերելով աշակերտի մէջ հետաքրքրութիւն դէպի կարգալու յօդւածը, մինք հէսց դրանով

նրանց մէջ առաջ ենք մդում այնպիսի հոգեկան վիճակ, որ ամենից աւելի նոպաստաւոր է կարգալու նիւթին իւրացնելու համար:

Այժմ մնում է յիշել ամենալաւ ըմբռնման մի պայմանի մասնի ևս:

Ժամանակակից հոգեբանութիւնը ձիշտ կերպով հաստատում է այն փաստը, որ հնչիւնների իւրացման և նրանց հետ կապւած մտապատկերների վերաբազրման միջև մի որոշ ժամանակի մասնութիւնը:

Միաժամանակ էկսպերիմենտալ փորձերը ցոյց են տել, որ տպաւորման և այն գիտակցելու միջև անցած ժամանակամիջոցն այնքան տեղի մեծանում է, որքան անսպասելի է լինում այդ տպաւորութիւնը: Այսաելի արդէն պարզ երևում է, որ աշակերտի այս կամ այն խօսքն արտասանելու դէպքում մտապատկերի երևան գալը, վերաբազրութիւնն այնքան աւելի դժւարին կլինի, որքան պակաս կապակցութեան մէջ են զանում այդ խօսքի պատկերը աշակերտի հոգու մէջ եղած մտապատկերների հետ: Այդ պատճառով, եթէ աշակերտի հոգու մէջ յիշեաւ մօմենտում մտապատկերներ և գաղափարներ կան, որոնք ոչ մի կապ, առնչութիւն չունեն այն պատկերների հետ, որոնք պէտք է մանեն նրա գիտակցութեան մէջ ընթերցանութեան միջոցով, կարող է պատահել, որ աշակերտը, լսելով կամ կարգալով հասկանալի, իրեն ծանօթ բառեր, չկարողանայ վերաբազրել, կամ, աւելի ձիշտ, վերաստեղծել այդ խօսքերից յետոյ զրանց համապատասխան մտապատկերները, այս դէպքում բոլորովին պարզ և հասկանալի այդ բառերը նրա համար կլինեն դատարկ հնչիւններ:

Ահա այս բոլորից յետոյ ուսուցչի երրորդ հոգուր պէտք է լինի այն, որ նախապատրաստէ աշակերտներին ըմբռնելու որոշ պատկերներ, այդ պատճառով, նախ քան յօդւածի կարգալը, նա պէտք է աշակերտների զիտակցութեան մէջ մտցնէ ընթեռնելի յօդւածի բովանդակութեան համապատասխան պատկերներ, և եթէ այդ արւած է, հաւատացած կարելի է լինել, որ թղթի վրայ աշակերտի տեսած և արտասանած խորհրդանշաներն աւելի շուտ և աւելի զիւրբն կարանան այն հասկացողութիւնների և մտապատկերների հետ, որ արդէն կայ աշակերտի զիտակցութեան մէջ, աւելի շուտ և հեշտապես աշակերտի հոգու մէջ որոշ պատկեր ասակերտի հոգու մէջ որոշ պատկեր ասակերտի կենդանի հնչիւններ:

Այժմ ամփոփելով մեր բոլոր ասածներն ամենալաւ իւրացում ձեռք բերելու մասին, կասենք, որ այդպիսի իւրացման պայմաններն հետեւալիքն են, ուշադրութիւնն ապաստղական արամագրութիւնն եւ իւրացման դիրութիւնն: Միեւ-

նոյն ժամանակ այդ պայմանները ձեռք բերելու համար ուսուցիչը պէտք է աշխատի աշակերտների զիտակցութիւնը մէջ առաջ կոչել այն մտապատկերներն եւ հասկացողութիւնները, որոնք խափանցած են այն մտապատկերների համապատասխան զգացմունքներով, որոնք ընթերցանութիւն միջոցով պէտք է զարթնեն աշակերտի հոգու մէջ:

Եւ խկապէս, քանի որ մենք նախապատրաստում ենք և տրամադրում աշակերտներին այսպէս, որ նրանց ամրող հոգեկան աշխարհն ունենայ այն ուղիղ ընթացքը, որի վրայ կանգնած է յօդւածի բովանդակութիւնը, մենք գրանով առաջ ենք բերում նրանց մէջ մի որոշ ուշադրութիւն և յարուցանում նրանց մէջ սպասողական տրամադրութիւն ու հետաքրքրութիւն դէպի կարգացող յօդւածը, և ձեռք բերում իւրացման դիւրութիւնն Այս գէպում արդէս անգիտակցական ընթերցանութիւն տեղի ունենալ չի կարող: Իւրաքանչիւր սան ամրողապէս խորասուզումն կլինի կարգացող նիւթի մէջ և տրամադրութիւնը նրանցից իւրաքանչիւրի համար ներկայանում է այն պարարտ հողը, որի վրայ ընկած ոերմը հարիւրապատիկ կվարձատրէ: Եւ եթէ ընթերցանութիւնը մեր գպրոցներում այլպէս զրած լինեն, համարձակ կարելի է յուսալ, որ մենք կոնվորեցնենք աշակերտներին բանաւոր, խոհուն ընթերցանութեան, մենք կվարժեցնենք նրանց կարգալ զիտակցարար:

Սակայն ինչպիսի զիտակախական եղանակներից պէտք է օգտի ուսուցիչն իր աշակերտների մէջ որոշ տրամադրութիւն առաջնելու համար:

Այդ եղանակները կարող են լինել խիստ բազմատեսակ: Այսպէս, օրինակ, ուսուցիչն ընթերցանութեան համար նշանակում յօդւածի նիւթի մէջ նկարագրած, պատկերացրած առարկան կամ իրեոյթը աշակերտին ծանօթացնելու համար կարող է օգտական իր սեփական նկարագրութիւնից, կարող է օգտական կամ իրական առարկայից, բայց զիմաւորապէս դրա համար ծոռայիլ կարող են ուսուցչի զրուցատրութիւնները, որոնք աշակերտի զիտակցութեան մէջ կմտցնեն յօդւածի բովանդակութեան համապատասխանող գաղափարներ և մտապատկերներ:

Հարկ ենք համարում նկատել, որ այսպիսի նախական զրուցատրութիւնների վերաբերեալ ցուցմունքներ կարելի է զլունել ամեն տեսակ մեթոդիկական ձեռնարկներում, այսպէս որ այս զրուցատրութիւններն, խկապէս ասած, նորութիւն չեն: Միայն սովորական մեթոդիկային ձեռնարկները յանձնարարելով և առաջարկելով այդ, բնաւ ինկատի չունեն այն զիմաւոր նպատակը,

որի համար այդ զրուցատրութիւնները պէտք է նշանակած լինեն, այն է՝ տրամադրութիւնը, որ անհրաժեշտ է ամենայն տեսակ կարգացող գրւածքն ըմբռնելու և իւրացնելու համար:

Մեթոդիկական ձեռնարկների հեղինակներն զգալով այդ զրուցատրութիւնների անհրաժեշտութիւնը, բայց չունենալով պարզ հասկացողութիւն, թէ ինչու են նրանք անհրաժեշտ, առաջարկում են այդ սովորաբար որևէ յատուկ դէպքերի համար, և, ի հարկէ, իւրաքանչիւրն իր եղանակով: Այսպէս, օրինակ, մէկն ասում է, որ զրուցատրութիւնները պէտք է նախորդեն ընթերցանութեանը միայն այն գէպքում, «երբ գասատուն գտնում է, որ ընթերցանութեան համար ընտրած յօդւածի մէջ խօսում է այնպիսի առարկայի մասին, որի մասին երեխանները ոչ մի հասկացողութիւն չունեն (Ծրուտնիկով) *): Միւսն ասում է, որ զրուցատրութիւնները պէտք է նախորդեն որևէ «Գործնական յօդւածներ»-ի և այն էլ միայն այն գէպքում, երբ կարգացածի բովանդակութեան իւրացումը չի ձեռք բերում միմիայն կարգալու միջոցով (?), երբ ընթերցանութեան միջոցին այդ բովանդակութիւնը բացատրելու համար կարիք կլինի ուշադրութիւնը ներացնել մի կողմ և այդպիսով ընդհատել ընթերցանութիւնը» (Ծիփոմիլով): Երբորդը խորհուրդ է տալիս գործադրել զրուցատրութիւնները գիտական-ժողովրդական յօդւածների կարգալիս և այն էլ միայն ուսուցման սկզբում (Բունակով): Վերջապէս, չորրորդն ուղղակի չի ասում, թէ որպիսի յօդւածների ընթերցանութեան ժամանակ հարկաւոր է զրուցատրութիւնը, այլ սահմանափակում է մի խօսքով «երբեմն» (Ենիցելի):

Այն ինչ զրուցատրութիւնները պէտք է նախորդեն ամենայն տեսակ յօդւածի զասարանական ընթերցանութեանը՝ ինչպէս զիտական-ժողովրդական, նոյնպէս և այլ՝ իր մէջ երեխաններին անձանօթ առարկայի նկարագրութիւն պարունակով յօդւածների, մանաւանդ, —որը մեթոդիկաներ հրատարակողների մեծամասնութեան կողմից անուշադրութեան է մատնում, —ամենայն տեսակ բանաստեղծական գրւածքների ընթերցանութեան ժամանակ, որոնք գպրոցում կազմում են ընթերցանութեան զիմաւոր առարկան և այդ նրա համար, որովհետեւ բանաստեղծական ընթերցանութեան միջոցին միայն տրամաբանութեամբ մենք կարող ենք օգնել աշակերտին առաջարկած գնդարւեստական ձեռներ և հասկանալու հեղինակի նկարագրած գնդարւեստական

*) Այն ժամանակ հարկաւոր է ցոյց տալ առարկան (կամ նրա պատկերը), որովհետեւ, եթէ աշակերտները նրա մասին ոչ մի մտապատկեր չունեն, ընթերցանութեան միջոցով նրանք չեն էլ կարող կազմել այն:

պատկերը. որ լուսաբանւած և թափանցւած է որոշ զգացմունքով: Այստեղ, բացի տրամադրութիւնից, ոչինչ չի կարող օգնել. գրւածքի ոչ անալիվը, ոչ էլ հարցերը կարող են ստիպել աշակերտին գիտակցելու և զգալու հեղինակի բանաստեղծական զըրւածքի ամբողջ գրաւչութիւնը, թափանցել նրանում, խորասուզել նրանով:

Ամենայն տեսակ յօդւածի ընթերցանութեան միջոցին տրամադրութեան բոլոր անհրաժեշտութիւնը և կարեռութիւնն աւելի պարզ ցոյց տալու համար առաջ ենք բերում անձնական և այլոց փորձերից միքանիաը. վերցնենք հէնց, օրինակի համար, բանաստեղծական գրւածքների ընթերցանութիւնը:

Աւսուցչութիւնս սկզբի տարիներում մի դպրոցում միքանի տարի շարունակ սովորեցրել եմ գ. բաժ. աշակերտներին կ. Մելիք-Շահնազարեանի «Ամպեր» ոտանաւորը: Առաջին տարիներում աշակերտները կարդալուց յետոյ անմիջապէս չէին կարողանում կարդացածի բովանդակութիւնը խելացի, կաղակցւած, իմաստալից պատմել, չէին կարողանում պատկերացնել ամպերի, արտերի, ամառնային անձրեային եղանակների բնական գեղեցկութիւնը, զրաւչութիւնը. կարդալուց յետոյ բովանդակութիւնը պարզաբանելու համար արւած վերլուծութիւնը, միտքն արտայայտելուն, կարդացածը պատմելուն օգնելու համար առաջարկած բոլոր հարցերը չէին կարողանում օգնել աշակերտին. ստիպւած էի կարդացնել նոյն յօդւածը միքանի անգամ: Տարիներ անցնելուց յետոյ միայն ինձ համար պարզեց, թէ ինչու աշակերտները չեն կարողանում կարդալուց յետոյ անմիջապէս հաղորդել իմ կամ իրենց կարդացածի միտքը. չէին կարող, որովհետեւ, ինչպէս ճիշտ նկատել է Տրօնանովսկին, չէին իւրացրել, չէին պատկերացը իրենց հոգու մէջ կարդացածի պատկերը: Միայն միքանիսը, մէծ յիշողութեան տէր աշակերտները, և այն էլ ոչ իրենց ինքնարուղին ցանկութեամբ, այլ իմ պահանջմամբ, մասսամբ և օգնութեամբ կարողանում էին հաղորդել ոտանաւորը խառն, անորոշ, յիշողութիւմբ մտարերելով միայն յօդւածի առանձին նախադասութիւնները:

Ժամանակի ընթացքում նկատելով գործադրածս եղանակի աննպատակայարմարութիւնը, վերջերը ևս փորձեր էի անում նախքան որևէ նոր յօդւած, ոտանաւոր կարդալը, միքանի բովէ աշակերտներին զրադեցնել զրուցատրութեամբ այս կամ այն առարկայի, այս կամ այն մտքերի, պատկերի շուրջը: Աւելորդ եմ համարում այստեղ առաջ բերել այդ զրուցատրութիւնները. ամեն ոք կարող է վարել այդ ըստ իր բարեհայեցողութեան: Կասեմ մի-

այն այսքանը, որ հէնց «Ամպեր» ոտանաւորի վերաբերեալ զրուցատրութեան վերջը ևս նկատում էի, թէ ինչպէս աշակերտները վերաբազրում էին իրենց մտքում ունեցած համապատասխան մտապատկերները, ինչպէս յաճախ նրանք իրենց մտքով թռչում, գնում էին դէպի հանդը, դէպի ամառնային մութ ամպամած եղանակը, յիշում էին այն, թէ ինչպէս իրենց մեծերն ամեն անգամ ամպամած եղանակներին են նայում և Աստծուց ինսպիրացի իրենց, անձրես թափէ, ծարաւ արտերը ջրէ, առաստ հունձ տայ, որ հացի առատութիւն լինի: Ամեն անգամ նախական զրուցատրութիւններից յետոյ ոտանաւորի կամ յօդւածի ընթերցմանն աշակերտները վերաբերում էին գիտակցաբար և երբոր ընթերցումից յետոյ ես դիմում էի աշակերտներին, թէ ով կարող է պատմել կարդացածի միտքը, դաստիարակի մեծագոյն մասը բուռն ցանկութիւն էր յայտնում: Իւրաքանչիւր աշակերտ ոտանաւորի բովանդակութիւնը հաղորդում էր մտածւած, գիտակցաբար. պարզ երեսում էր, որ իւրաքանչիւրը պատկերացնում էր իր առաջ ոտանաւորի առաջացրած պատկերը:

Առանձնապէս հետաքրքրութեան արժանի է հետեւեալ օրինակը. Մի գերմանացի ուսուցչի որդի, չնայած որ ոուսերէնին միանգամայն լաւ էր տիբապետում, սակայն տանը միշտ խօսել և մտածել է գերմանակերէն: Երկրորդ տարւայ սովորող է եղել: Մի անգամ տանը կարդալ սովորելու համար նրան տրւած է եղել «Գայլը և պատմւածքը», որտեղ պատմւածքը, որտեղ պատմւածքը սպառնում է երեխային տալ գայլին: Աշակերտը կարդացել է պատմւածքը միքանի անգամ և երբ հայրը պահանջնել է պատմել բովանդակութիւնը, երեխան չի կարողացել: Այս ժամանակ հայրը թողել է մի կողմ ընթերցանութիւնը, գտել է մի պատկեր, որ ներկայացնելիս է եղել մի գայլ՝ ձմեռնային գիշերին կանգնած գիւղից քիչ հեռու, անկախ բոլորովին կարդացածից. Հայրն սկսել է դիտել երեխայի հետ պատկերը և վիրջինս որոշ հարցեր տալ թէ ով է այս նկատել. գայլն ինչու է այստեղ կանգնած, ինչ բանի է նա ականջ դնում և այլն: Ապա վերցը է գրքոյկը և մանուկին կարդացնել տեսել: Կարդալուց յետոյ մանուկը քիչ մտածել է և յետոյ ասել. «Գիտես, հայրիկ, իմ կարդացածս այն գայլի մասին է, որ հէնց այժմ քեզ հետ միասին գիտեցինք. չէ՞ որ այն գայլն էլ է ականջ դնում, թէ ինչպէս է մանուկը լաց լինում: Այսուհետեւ, երբ հայրն առաջարկել է պատմել գայլի մասին իր կարդացը, մանուկն աղատ կերպով հաղորդել է պատմւածքի բովանդակութիւնը, պատմել է նոյն իսկ այնպիսի մանրամասնութիւններ, որ գրքի մէջ չեն եղել սակայն տպաւորւել է պատկերից: Այդ մանրամասնու-

Թիւնները մտել էին հրեխայի հոգու մէջ, հակառակ իր կամքին, կարդացածից ստացած բովանդակութեան հետ միասին և նրա մէջ առաջացրել կարդացած յօդւածի պարզ պատկերը։ Աշակերտի բոլոր նախորդ ընթերցանութիւնները ոչ մի նշանակութիւն չեն ունեցել յօդւածի իւրացման և այն հասկանալու համար։ Նրանք եղել են անփառակցական, գիտակցական է եղել միայն մի ընթերցանութիւն—վերջինը։

Որովհետեւ բանաստեղծական ստեղծագործութիւնները ոչ միայն մտքերի, այլ և, գլխաւորապէս, մարդու զգացմունքների արտայայտութիւն են, աղ պատճառով էլ այդպիսիների ընթերցումը միայն այն ժամանակ կարող է անւանել գիտակցական, երբ աշակերտները ոչ միայն կհասկանան մտքով նրանում արտայայտւած իմաստը, այլ և, որ և ամենակարենորն է, կզգան սրտով այն զգացմունքները, որոնք հեղինակի կողմից մտցւած են բանաստեղծութեան բառերի մէջ, լինի այդ մի մեծ խնդութիւն, թէ խորը վիշտ, թախիծ միենոյն է։ Այսպիսով, ուրեմն, ոտանաւորները պէտք է իւրացւեն աւելի սրտով, քան մտքով։ Եւ այս դէպքում ոչ մի հարց օգնել չի կարող մեղ։ Այստեղ օգնել կարող է միայն տրամադրութիւնը։

Աշակերտներին տրամադրելու համար ուսուցիչը պէտք է աշխատի յարուցանել նրանց յիշողութեան մէջ ստեղծագործութեան, ոտանաւորի ոգու, բռուն կենդրոն կազմող նիւթի պատկերը և միաժամանակ նրանց սրտերում առաջացնել այն թախիծը, տըխութիւնը և առհասարակ այն զգացմունքները, որ կամեցել է իր գրւածքով արտայայտել ստեղծագործողը։ Եւ եթէ այս բռուր նախապատրաստութիւնից յետոյ առաջարկվ աշակերտներին կարդալ ոտանաւորը, հիանալի արդիւնք կունենայ։ Պատահել է, որ այդպիսի նախապատրաստութիւնից յետոյ աշակերտները դասարանում կարգացել են թախիծ արտայայտող մի գեղեցիկ ոտանաւոր։ Ընթերցումից յետոյ փոքրիկ, տաս-տասներկ-ւ տարեկան երեխաներն այնքան են զգացւած եղել, որ առժամանակ դասարանում ընդհանուր լուռթիւն է տիրել և այդպիսի լուռթիւնը խանգարել է միայն աշակերտներից մէկի, երկուսի առանձին զգացմունքով, առանձին տրտմութեամբ արտասանւած որևէ բացականչութիւնը։ Դասամիջոցին կամենալով աւելի լաւ գիտել նոյն աշակերտների վրայ կարգացածի ուսուցած ընդհանուր տպաւորութիւնը, ուսուցիչներից ոմանք յաճախ անմիջապէս գուրս են գալիս աշակերտների մէջ։ Այդպիսի դէպքերում շատ անգամ այդ փոքրիկ զգայուն սրտերը, թողնելով իրենց խաղը, հետաքրքրութեամբ մօտենում են ուսուցչին, շրջապատում նրան և առանձին լրջութեամբ

հարցեր տալիս կարդացածի մասին, խօսում նման բանաստեղծութեան կամ համապատասխան իրական կեանքի երեոյթների մասին և այլն։

Այս բոլոր հետաքրքրութիւնը, զգացւածութիւնը, աշակերտի հոգու վրայ ունեցած այս խորը ներգործութիւնը, որ տեղի է ունեցել առանց հարցերի, մենք կարծում ենք, արդիւնք է միայն արամագրութեան։ այդպիսի ազդեցութիւնը կարող է լինել միայն լիակատար գիտակցական ընթերցանութեան հետևանք։

III

Մինչև այժմ մենք իսկապէս խօսել ենք կարդացածի իւրացման մասին։ Սակայն դրանով գեռ չի սահմանափակում մայրենի լեզուի վերաբերմամբ ուսուցչի հոգսը բացարական ընթերցանութեան դասերին։ Նա պէտք է հոգս տանի նաև, որ աշակերտների յիշողութեան մէջ ամրանայ սաացւած նիւթը, այսինքն նրան հարկաւոր է ի նկատի ունենալ նաև մտքում պահելու ամենալաւ միջոցները, որովհետեւ բաւական չէ, որ աշակերտները միայն իւրացնեն կարգացածը, անհրաժեշտ է նաև, որ կարդացածը հաստատուն կերպով ամրապնդվի նրանց հոգու մէջ։ Տեսնենք, թէ որոնք են իւրացրածն ամենալաւ կերպով մտքում պահելու անհրաժեշտ պայմանները։

Ներկայումս հոգերանութեան միջոցով ճիշտ հաստատւած է, որ ամենապարզ և ամենահաստատուն մտապատկերներ ստացւում են տեսողական տպաւորութիւններից։ Ֆրանսիական գիտնական Ռիբոն իր էկսպերիմենտալ փորձերով պարզ ցոյց է տեսել տեսողական պատկերների զուգորդման դիւրութիւնը և մտքում պահելու հաստատուն լինելը։

ՈՒիրօն հարց ու փորձի է ենթարկել հարիւրից աւելի զանազան զիրքի և պրօֆէսիալի անձանց այն պատկերների մասին, որոնք անմիջապէս առաջ են բերում նրանցում հետեւեալ բառերը, շուն, կենդանի, ծաղիկ, ձեւ, արդարութիւն, բարութիւն, առաքինութիւն, օրէնք, թիւ, ոյժ, ժամանակ, յարաբերութիւն, պատճառ, անհունութիւն։ Սաացած հետեւեանքների վերլուծութիւնը փորձեր անողին հնարաւորութիւն է տեսել որոշել մտքում պահելու երեք տարբեր տիպեր։ Թանձրացեալ, որ բնորոշում է անոողական և մասամբ մկանացին պատկերներով, տեսողական-տպագրական, որի ներկայացուցիչները, լսելով որոշ խօսք, իրենց գիտակցութեան մէջ վերաբարպում են նրա արտաքին ձևը տպագրւած կամ գրւած ձեռվ և լսողական տիպ, որի առանձ-

նայատկութիւնն այն է, որ սուբեկտի գիտակցութեան մէջ տիրում է յիշեալ խօսքի միմիայն լողական պատկերը, որին չի հետևում ոչ կօնկրէտ մտապատկերը, ոչ էլ նրա արտաքին ձևի տպագրւած կամ գրւած պատկերը: «Թանձրացեալ տիպը,—ասում է Ռիբօն,—ամենատարածւածն է» *):

Միևնույն է ցոյց տալիս նաև Ստէտոսնը: Նրա ուսումնամիրութիւնից երևում է, որ 100 անձից 82-ը ունեն մեծ մասամբ տեսողական պատկերներ: Այստեղից պարզ է, որ տեսողական պատկերները ներկայանում են ամենահաստատունը մարդու հոգու մէջ: Կարեոր ենք համարում նկատել որ փորձերը կատարւել են հասակաւորների վրայ: ուրեմն և մանուկների տեսողական պատկերն առաւել ևս հաստատուն պէտք է լինի, «որովհետեւ նրանց միտքը սկզբից մինչև վերջը, Աէքսովի ասելով, շրջում է զգացմունքին մատչելի շրջանում», և նրանց բոլոր պատկերները համարեա տեսողական են:

Սակայն ի՞նչ կերպ է ուսուցիչը կարողանում աշակերտների կարդալուց ստացած մտապատկերները ենթարկել տեսողական ըմբռնումների: Ամերիկական դպրոցը, որը կարդալ և գրելու գիտակցական ուսուցման մէջ արտակարգ, ամենից գերազանց առաջիմութիւններ է արել, վաղուց լուծել է այդ հարցը: Այնտեղ բառերի հետ միասին և նրանց փոխարէն տալիս են երեխաներին նաև նկարներ: Այն նպատակը, որին այդպիսի ժամանակ ձգտում են, կայանում է նրանում, որ երեխաները գրւածքի կամ տպագրածի մէջ տեսնեն ոչ թէ բառեր, այլ հէնց պատկերներ, որպէսզի տպագրւած բառը պատկերի նման նոյնպէս պարզ և կենդանի կերպով ստիպէ աշակերտին վերարտազրել մտապատկերը կամ գործողութիւնը: Այս կողմից նրանք մինչև իսկ այնպիսի վերացական գաղափարներին, ինչպիսին թիւն է, աշխատում են իրական արտայայտութիւն տալ: Այսպէս, օրինակ, 1900 թ. ֆրանսիական ցուցահանդէսում ամերիկական դպրոցների թւարանական տետրակներում ցոյց էր տրւած, թէ ինչպէս են սովորեցնում գումարումը:

Զախ կողմում գրւած էր $2+1=3$. աջ կողմում, լուսանցքում, նկարւած է երկու նստած մուկ և դէպի նրանց վազող մի երրորդ մուկ: Նոյն ցուցահանդէսում կային նաև աշակերտների լեզուների գրաւոր աշխատութիւններ, օր. յօդւածների բովանդակութիւնների և շարագրութիւնների տետրեր, որոնց բոլոր լուսանցքները կարդարւած էին նկարներով: Աշակերտը գրում է

պատմութիւնից ժամնա-դ'Արկի մասին և լուսանցքներում նկարադրում է:

Այսպիսով ուրեմն, այն հարցը, թէ կարդալուց ստացւած մտապատկերները ի՞նչպէս պէտք է ենթարկել տեսողական ըմբռնումի, հեշտութեամբ է լուծում. ստիպել պէտք է միայն աշակերտին նկարելու իր կարդացածի պատկերը: Եւ երբ աշակերտը կնկարէ, երբ վերացական գաղափարները և մտապատկերները կվերածւեն կօնկրէտ պատկերների, նա ճշգրիտ և հաստատուն կերպով կտպաւորէ իր հոգու մէջ կարդացածի բովանդակութիւնն՝ իր բոլոր մանրամասնութիւններով:

Կարդացածի այդպիսի մարմացումը նկարի ձեռվ աշակերտին հսարաւորութիւն կտայ: հէնց իր պատկերի վրայ, կարծես իրավէս, ահսնելու կարդացածի ամրող բովանդակութիւնը: Նա անմիջական կերպով կզգայ այդ և կարդացածի բովանդակութիւնն, իրեւ իրականութիւն, կմտնի նրա հոգու մէջ: Եւ յետոյ պատմելու, կարդացածը իրեն արդէն յայտնի աշխատութիւնների հետ համեմատելու, մասնաւոր և գլխաւոր մաքերը գուրս բերելու ժամանակ աշակերտը պարզ կտեսնի իր աչքերի առջև կարդացածը, իրեւ ինչ որ իրական բան, որ ի՞նքը տեսել է:

Անշուշտ այժմ առարկողներ կլինեն. թէ ի՞նչպէս կարելի է ստիպել տարրական դպրոցի աշակերտին նկարել, և այն էլ նկարել ամեն բան. թէ ժանր, թէ պէյզաժ, թէ ծով: Նա և չի կարող, և բացի դրանից այդ բանի համար տասն անդամ աւելի ժամանակ գործ կզնէ, քան հէնց յօդւածի ընթերցանութեան համար: Ճիշտ է, եթէ մենք պահանջները նրանից նկար և ոչ թէ գաղափարների ու մտապատկերների մարմացում թանձրացեալ ձեռվ, այն ժամանակ, ճշմարիտ որ, նա նկարել չի կարողանայ, եթէ կարողանայ էլ, դրա համար գործ կզնէ ոչ թէ մի ժամ, գուցէ և ոչ էլ երկու ժամ, այլ շատ աւելի: Բանն այն է, որ մեզ համար գեղարվեստական նկար հարկաւոր չէ: Թող ամեն ոք նկարէ այնպէս, ի՞նչպէս կարող է: Բայց որ ամեն ոք կարող է, դրանում կասկած լինել չի կարող: Հինգ տարեկան երեխան նկարը այն ամենը, ինչ որ հարկաւոր է. թէ մարդ, թէ կենդանի, թէ թռչուն, թէ ծառ: Նրա նկարի վրայ նայողը գուցէ մարդու կամ ձիու նման որևէ բան չգտնի, սակայն երեխան տեսնում է իր նկարի մէջ թէ մարդ, թէ ծառ: Այսպէս էլ աշակերտը, թէկուզ նրա նկարած թռչունը ձևակերպած լինի մի շրջանաձև գծով, քթի տեղ լինի մի գիծ, իսկ ոտների տեղ երկու գիծ: այդ չէ մեզ համար կարկորը: Նա տեսնում է այդ շրջանաձև գծի մէջ թռչուն, մեզ համար հէնց միայն այդ է հարկաւոր և ուրիշ ոչինչ:

*) Нечаевъ—«Современная экспериментальная психология».

Ուսուցիչը մինչև իսկ ինքը պէտք է ցոյց տայ բոլոր դէպշերում էլ առարկաների ամենապարզ, հասարակ ուրեանկարը և միշտ պէտք է կրկնէ աշակերտին, որ չպէտք է արտանկարել. «աւելի լաւ է դու քեզ ու քեզ նկարիր, որքան կարող ես, միայն ամեն բան մանրամասնօրէն»: Աշակերտներն էլ այդպիսի պայմաններում շուտով են ընտելանում այդ աշխատանքին, և նկարչութիւնն սկսելուց մի շաբաթ յետոյ նրանք ազատ նկարում են դասարանում ամեն աւեսակ նկար, ամենաշատը հինգ բոլէի մէջ:

Այսպիսով, ուրեմն, ինչպէս երևում է, արտաքուստ այդ բանը միանգամայն իրագործելի է:

Այժմ, հարց է առաջ գալիս, թէ այդ նկարը դասարանում բացատրական ընթերցանութեան միջոցին ի՞նչպէս պէտք է գլուխ բերել:

Յօդւածը կարդալուց յետոյ, առանց որևէ հարց տալու, պէտք է գրատախտակի մօտ կանչել մի աշակերտի կամ հէնց իրեն կարդացողին, բայց աւելի լաւ է մի ուրիշին և հարկադրել նկարել: Աշակերտը արագ կերպով կսկսէ նկարել. միւս աշակերտները ուսուցչի թոյլտութեամբ գնում, օգնում են նկարողին, ցոյց առալով կամ նրա անձշտութիւնները, կամ նրա բաց թողած մանրամասնութիւնները. 3—5 րոպէից յետոյ նկարը պատրաստ կլինի, որից յետոյ կարելի կլինի ձեռնարկել յօդւածի վերլուծութեանը և պարզաբանմանը, գլխաւոր միտքը դուրս բերելուն և այլն:

Յաճախ կարդացած յօդւածը մի նկարով չի կարելի պատկերացնել: Սովորաբար, որքան նրանում մասեր կան, նոյնքան և նկարներ են հարկաւոր: Այն ժամանակ գրատախտակի վրայ, նրա զանազան անկիւններում պէտք է զետեղել երեք-չորս նկար,

Երբեմն, սկզբներում, կարդացած յօդւածները նկարազարդելու համար միքանի աշակերտներ լիսկատար կերպով չպատկերացնելով իրենց մէջ անելիքը, հրաժարւում են նկարելուց և յայտնում, որ անկարող են այդ անել: Ահա այս պատճառով աւելի լաւ է սկզբում ուսուցիչն ինքը նկարէ գրատախտակի վրայ կարդացած յօդւածի համապատասխան նկար աշակերտների թելադրութեամբ, միայն այդ պէտք է կատարելի ամենապարզ կերպով: Եւ որովհետեւ այդ նոյն յօդւածը յետոյ տրւում է աշակերտներին տանը ինքնուրոյն ընթերցանութեամբ պարապելու համար, այդ պատճառով կարելի է պատիրել նրանց տանը նոյն կերպ նկար տեսրերում: Այս ուղղութեամբ աշակերտները երկու-երեք դասից յետոյ կհասկանան, թէ բան ինչումն է և կսովորեն աղատ կերպով արտայատել նկարներով ամենայն յօդւած:

Այս բոլոր յօդւածները, որոնք արւում են աշակերտներին տանն ինքնուրոյն ընթերցանութեան համար, նկարներով արտաւում: Այս դէպքում ևս յօդւածների պատկերազարդումով արտայայտելն առանձնապէս կարելոր նշանակութիւն ունի, որովհետեւ աշակերտը միայն այն ժամանակ է նկարում պատկերը, երբ հասկանում է և պատկերացնում իր առաջ յօդւածի ամբողջ բովանդակութիւնը: Այս դէպքում շատ բան ենք ձեռք բերում շուտով նկարում պատկերը, նաև՝ որ աշակերտը կկարդայ յօդւածը և այն էլ խիստ ուշադիր կերպով: Նաև ամբողջ հոգով կձգտի գիտակցական ընթերցանութեան, կաշխատի ձեռք բերելով միայն ընդհանուրը, այլ և կարդացածի բոլոր մանրամասնութիւնները, երկրորդ՝ քանի որ պատկերը նկարւած է, մենք կարող ենք հաւատացած լինել, որ աշակերտը հասկացել և իւրացրել է յօդւածը. վերջապէս, երբորդ՝ նկարած պատկերն ուղղակի ցոյց կայ մեզ, թէ ինչպէս աշակերտն իւրացրել է կարդացածը, ընթերցանութեան ժամանակ նրա համար ի՞նչն է սնհասկանալի եղել, ի՞նչ է նա բաց թողել:

Ուսուցման երկրորդ տարին դասարանում կարդացած յօդւածների նկարազարդումը կարելի է նոյն իսկ դադարեցնել և սահմանափակել միայն տանը ինքնուրոյն ընթերցանութեան համար տրւածի նկարազարդութեամբ, որովհետեւ այդ ժամանակ-ներում, գործը այդ կերպ տանելու դէպքում, այն աստիճան հմտացած կլինեն կարդացածը պարզ հասկանալու և պատկերաւոր կերպով ըմբռնելու մէջ, որ միանգամայն բաւարար կլինի միայն հարցնել, թէ ի՞նչպէս է իրեն ներկայացնում աշակերտը կարդացածի պատկերը: Աշակերտը միքանի խօսքերով կհաղորդէ այդ պատկերի մասին և մենք, համոզելով, որ նա պարզ պատկերացրել է, անմիջապէս կդիմենք յօդւածի պատմելուն և նրա վերլուծմանը: Իսկապէս կարգալու յօդւածի պատկերազարդումը, որը սովորեցնում է աշակերտներին գիտակցական ընթերցանութեան և պատկերաւոր մտածողութեան, պէտք է սկսի ուսուցման հէնց առաջին տարւանից:

Որպէսզի ցոյց տանք, թէ իսկապէս, որքան մեծ է յօդւածների պատկերազարդման նշանակութիւնը կարդացածը պարզ պատկերացնելու և իւրացնելու համար, կաշխատենք կրկն այդ ցոյց տալ օրինակներով:

Միշտ նկատւած է, որ դասարանում միքանի աշակերտներին վերին աստիճանի դժւարութիւն է պատճառում կարդացածի պատմել, մանաւանդ ինքնուրոյն կերպով, մինչև իսկ միքանի անգամ կարդալուց, միքանի աշակերտների պատմելուց, վերլու-

ծելոց և բովանդակութիւնը պարզաբանելուց յետոյ. կարդացած յօդւածը նրանց չի տւել նկարի կենդանի պատկերացումը: Մի դպրոցում ինձ ծանօթ ուսուցիչներից մէկը միքանի այդպիսի աշակերտներ է ունեցել. դրանք չէին կարողանում կարդացածը պատմել: Ուսուցիչը սկսում էր վերև յիշւած եղանակով տանել ընթերցանութիւնը. որպէսզի ինքը համոզւի այդ եղանակի արդինաւէտութեան մէջ, իր փորձերը կենդրոնացնում էր թոյլերի, առանձնապէս այդպիսիներից մէկի վրայ:

Ընթերցանութեան համար ուսուցիչը վերցրել է մի ուսանաւոր: Տրամադրելով նախօրօք աշակերտներին ուսանաւորի ընթերցանութեանը, նա նախ այն կարդացնել է տւել մի թոյլ աշակերտի և ապա ստիլել պատմելու: Արդինքն եղել է նոյնը, ինչպէս և միշտ այս անգամ էլ ընաւ չի կարողացել կարդացածը բանաւոր հաղորդել: Այս դէպքից յետոյ ուսուցիչը դուրս է բերել գրատախտակի մօտ նոյն աշակերտին և հարկադրել նկարելու կարդացածի բովանդակութիւնը: Միւս աշակերտների օգնութեամբ յաջողւում է պատկերը նկարել: Ապա ուսուցիչը կրկին առաջարկել է նոյն աշակերտին պատմել այն, ինչ որ կարդաց և ապա նկարեց: Աշակերտն իր առաջ ունենալով պատկերը, միանդայն կապակցւած և պարզ կերպով պատմել է ամբողջ ուսանաւորի միտքը: Ահա այսպէս, աստիճանաբար, շնորհիւ պատկերներ նկարելու, այդ թոյլ համարւած աշակերտը սովորել է, աւելի ճիշտ վարժել է կարդացածը արտայայտել նախ պատկերով իսկ յետոյ միայն իր հոգու մէջ ունեցած մտապատկերների օգնութեամբ. տարւայ վերջն այդ թոյլ համարւած աշակերտի կարդացածի պատմելը ոչնչով չէ տարբերել միւսների պատմածից:

Միւսոյնը կարելի է ասել նաև այն միւս աշակերտների մասին, որոնք նոյնպէս թոյլ էին մտքերն արտայայտելու, պատմելու մէջ, նրանք ևս տարւայ վերջը, բացառապէս պատկերների օգնութեամբ, ճեռք են բերել միանդայն աշակերտին:

Պատկերներն օգնում են աշակերտներին հաղորդել ամենամեծ և դժւարին յօդւածները բոլորովին ազատ կերպով: Այդպիսի ժամանակ իրենց պատկերների մէջ աշակերտները տեսնում են ոչ միայն ֆաստական նիւթը, այլև այն ամբողջ գեղարւեստականութիւնը, ամբողջ տրամադրութիւնը, որով թափանցւած է յօդւածը, ուսանաւորը, նկատում է ամենապերացական գաղափարները, նրանց մանկական երեակայութեան ոյժը հնարաւորութիւն է տալիս տեսնելու իրենց նկարների մէջ այն ամենը,

որ հարկաւոր է իրենց համար: Հետաքրքիր է այս կողմից Զէխուովի «Լոմա» պատմւածքի մէջ Սերեօժաւ անունով երեխան: «Նա, — ասում է Զէխովը, — հնարաւոր է համարել մատիտով արտայայտել բացի առարկաներից, նաև իր զգացմունքները: Այսպէս, օրինակ, երաժշտական խմբի հնչիւնները նա արտայայտում էր զնդան ծխային բծերի ձեռվ, սուլոցը՝ որորապտոյտ (խխնջաձե) գծի ձեռվ: Երա հասկացողութիւն մէջ հնչիւնը սերտ կերպով փոխադարձաբար կցորդում էր ձեռի և գոյնի հետ, այնպէս որ տառերը ներկելիս, նա ամեն անգամ անփոփոխ կերպով Ա հընչիւնը ներկում էր գեղին գոյնով, Ա—կարմիր, Ա—սև և այլն:

Թէ ինչ ասութիւն տղատ և պարզ են իրացնում աշակերտները յօդւածն այդ եղանակով տարած ընթերցանութեան գէպքում, առանձնապէս լաւ կերեի գասարանի համարեա բոլոր աշակերտների կողմից կարդացածը պատմելու ցանկութիւնից: Փորձեած է, որ այդպիսի գէպքում բոլորը վրայ են պրծնում և առաջարկում իրենց ծառայութիւնները, առաջ բերելով այդ միջոցին այնպիսի անհերքելի հիմունքներ, որոնք նրանց իրաւունք է տալիս պատմելու, ինչպէս, օրինակ. «Ես այդ տեսել եմ, ես լաւ կապատմեմ» կամ «այդպիսի բան ինձ պատահել է, ես աւելի լաւ կպատմեմ» և այլն: Այսպիսի իրացումները և բուռն ցանկութիւնները միանդայն հասկանալի են, քանի որ կարդացածի պատկերն այնպէս պարզ զրոշմում է աշակերտի հոգու մէջ, այնպիս լաւ է նա նրան տեսնում և պատկերացնում, որ նրա մէջ առաջ է գալիս կարդացածը պատմելու, նկարագրելու անյագ ցանկութիւն: Թէ արգեօք նախնական եղանակով տարւած բացատրական ընթերցանութեան գտներին այդպիսի բան նկատում է թէ ոչ չգիտենք հաստատապէս, սակայն անձնական փորձերի ժամանակ իմ ուսուցչութեան միջոցին այդպիսի կենդանութիւն և այդպիսի կատարեալ գիտակցական վերաբերմունք զառարանի աշակերտների երևակայութիւնը, տրամաբանական մտածողութիւնը, լիզուն, կարելի է առաջարկել նրանց մտածել—գտնել և հաղորդել կարդացած յօդւածի պլանով նոյնպիսի գաղափար ունեցող իրենց գիտցած մի այլ պատմութիւն կամ մտարերել որևէ մի պատմածք, ուսանաւորը իրենց անցածներից: Նրանցից

Կարդացած յօդւածների բովանդակութիւնը պատկերացածն օգնութեամբ այնպէս հաստատուն կերպով ամրանում է աշակերտների հոգու մէջ, որ նրանք ազատորէն օգտաւում են այդ նիւթից: Յաճախ գլխաւոր միտքը դուրս բերելուց յետոյ, կամենալով զարգացնել աշակերտների երևակայութիւնը, տրամաբանական մտածողութիւնը, լիզուն, կարելի է առաջարկել նրանց մտածել—գտնել և հաղորդել կարդացած յօդւածի պլանով նոյնպիսի գաղափար ունեցող իրենց գիտցած մի այլ պատմութիւն կամ մտարերել որևէ մի պատմածք, ուսանաւորը իրենց անցածներից: Նրանցից

շատերին յաջողւել է մտաբերելով գտնել համապատասխան գաղափարով անցած, արդէն ծանօթ յօդւածներ:

Նկարների շնորհիւ գլխաւոր, առաւել ևս մասնաւոր մտքերը դուրս բերելով հեշտանում է այնունետեւ աշակերտներին ղեկավարելու գործը: Նկարելով պատկերը, նրանք ուղղակի նշանակում են պատկերի տակը այս, ինչ որ նրա վրայ նկարած է, և դրանով մեծաւ մասամբ արտայայտում են մասնաւոր կամ զըլխաւոր միտքը: Օժանդակ հարցերի օգնութեանը դիմելու այստեղ հազիւ թէ կարիք լինի:

Այս բոլորի վերև առաջ բերածներից երեսում է, որ վերաբաժն պատկերն ամբողջ ուժով կիմնաւորէ կարդացածը աշակերտի հոգու մէջ: Այդ պատկերը կդառնայ նրա լիակատար սեփականութիւնը: Եւ հէնց այդ է կարդալու վերջնական նպատակը:

Այնունետեւ մենք կարող ենք առաջարկել նրան այնպիսի հարցեր, որոնք կպարզաբանեն մի մասի ունեցած յարաբերութիւնը, կապը միւսի հետ և կրացատրեն յօդւածի բովանդակութիւնը,—աշակերտը համարձակ և հաստատուն համոզմունքով կպատասխանէ այդ հարցերին, որովհետեւ հաստատուն կերպով տեսնում է իր աշքի առջև յօդւածի ամբողջ բովանդակութիւնը: Կարելի է առաջարկել նրան համեմատութիւններ անել,—նա ազատ կերպով կհամեմատէ կարդացած յօդւածն իրենց նախկին կարդացածի հետ, որի բովանդակութիւնն ամբողջութեամբ դաշնուում է նրա հոգու մէջ: Վերջապէս կարելի է ստիպել յօդւածը պատմելու. նա կպատմէ այդ, կպատմէ ազատ, առանց հարցերի, որովհետեւ տեսնում է իր հոգու մէջ կարդալուց ամբողջ ձեռք բերածը. կպատմէ նա այնպէս, ինչպէս կպատմէ իր կեանքում պատահած որևէ դիպւածի մասին: Եւ որովհետեւ իւրաքանչիւր աշակերտ տեսնում է կարդացածի պատկերն իր հոգու մէջ ըստ իր, միանգամայն սուրեկտիւ կերպով այդ պատճառով էլ կպատմէ այնպէս, ինչպէս նրա մտքում պատկերանում է: Այս եղանակով աշակերտներին զարգացնելով, մենք ամբողջ դաստիարակութեանը չենք կարող տանել մի ընդհանուր չափի տակ: Իւրաքանչիւնը կմտածէ և կարտայայտէ մտքերն ըստ իր կարողութեան: Ամեն ոք կզարդանայ համաձայն իր անհատական առանձնայատկութիւնների, իւրքնագործունէութեան միանգամայն լիակատար ասպարէզ է:

Աշակերտն առանց գժւարութեան կարողանայ բաժանել այժմ ամբողջ յօդւածը մասերի, այդ արդէն բաժանաւած էնրա մէջ: Իւրաքանչիւր մասը նա ներկայացրել է առանձին նկարով և իւրաքանչիւր մասը պատկերացրել է իր մէջ:

Աշակերտի համար այժմ ոչ մի գժւարութիւն չի ներկայաց-

նում դուրս բերելու յօդւածի, ոտանաւորի գլխաւոր միտքը, գաղափարը. նա գիտէ, թէ ինչի մասին է կարդացել, իմանում է, թէ ինչի՞ մասին է պատմում. նա տեսնում է այն ֆօկուսը, որի շուրջը խմբած են բոլոր մտքերը. և միանդամայն ազատ կերպով կասի ձեզ, կարտայայտուի այն ֆօկուսի մասին, կպատմէն նոյնքան ազատ, ինչպէս կպատասխանէր մեր ամեն մի հարցին, թէ ինչ է պատահել իր հետ, փոխանակ պատահածի մասին մի երկար պատմւածք պատմելու: Նա բարոյախօսական եզրակացութիւն դուրս կրերէ այնպէս, ինչպէս դուրս կրերէր իրեն պատահած որևէ գիտութիւց:

Այս բոլորից յետոյ ուսուցիչը պէտք է հարցերով, համեմատութիւններով, փոփոխութիւններով պարզէ յօդւածի բովանդակութեան ամբողջ էութիւնը. կարելի է հարկադրել աշակերտին արդէն իւրացըած նիւթի հետ խիստ զանազանակերպ համախմբումներ (կօմբինացիաներ) կատարել և այդպիսով զարգացնել նրա յիշողութիւնը, երևակայութիւնը, տրամարանական մտածողութիւնը և այն, առհասարակ նրա հոգեկան գործունէութեան բոլոր կողմերը:

Եզրափակելով մեր խօսքը, կասենք մեր խորին համոզմունքը, որ եթէ մենք մայրենի լեզվի դասաւանդումը մեր դպրոցներում այսպիսի հիմքերի վրայ դնենք, եթէ մենք իրապէս սովորեցնենք աշակերտներին պատկերաւոր ըմբռնելու. իւրացնելու կարդացածը, սովորեցնենք նրանց նկարազբելու հոգու մէջ տեսանելի պատկերները, մենք միաժամանակ և՛ կսովորեցնենք նրանց կարդալ, և՛ կսովորեցնենք նրանց մտածել, և՛ կսովորեցնենք արտայայտել իրենց մտքերը, կսովորեցնենք այն բանի, որ կազմում է իւրաքանչիւր գպրոցում մայրենի լեզվի դասերի ուսուցման ամբողջ կարենութիւնը:

IV

Մինչև այժմ մենք պարզաբանում էինք զպրոցներում մայրենի լեզվի դասերին կարդալ սովորեցնելու բուն նպատակը և այն ուղին, որով ընթանալու է իւրաքանչիւր դասատու այդ բուն նպատակին համելու համար: Պարզ և որոշ չափով վերլուծեց գիտակցական ընթերցանութիւն ձեռք բերելու հարցը և ցոյց տրեց, թէ ինչ պէտք է տայ զպրոցը մայրենի լեզվի դասերին մտաւոր ոյժերի զարգացման կենցրոնացման առաջին շրջանում: Սակայն առանձին ուշագրութեան արժանի է ընդհանրապէս մայրենի լեզվի

զրաւորի տւանգման խնդիրը, որը ներկայումս ընթերցանութեան վերաբերեալ խնդրից աւելի սակաւ է ուշագրութեան առնւած և սխալ ուղիով է տարւում մեղանում գոյութիւն ունեցող զպրոց-ներում։ Ահա այդ պատճառով առանձնապէս ուշագրութեան ար-ժանի է Տրօեանովսկու շօշափած զրաւորների հարցը. այս անգամ ևս նա իր սովորական անկեղծութեամբ հանդէս է գալիս և առանձնապէս շեշտում է, որ ոչ միայն միջնակարգ, այլ և տար-րական դպրոցներում պէտք է սովորեցնել մանուկներին ինքնու-րոյն մտածել նոյնիսկ զրաւորների ժամանակ. նա քննութեան նիւթ է դարձնում այս անգամ այն հարցը, թէ ինչ աստիճան այժմեան դպրոցը ձգտում է սովորեցնել սաներին մտքերն ինք-նուրոյն կերպով զրաւոր արտայայտելու արեսարը։

Ինչպէս կարգալու, նոյնպէս և զրելու ուսուցումը երկու կողմ ունի՝ արտաքին և ներքին։ Ընթերցանութեան արտաքին կողմը նրա մեքենայական վարժութիւնն է և բառերի արտասանու-թեան որոշ պայմանները (աղջկ—ախչիկ, թաթէոս—թագէոս և այլն), Ընթերցանութեան ներքին կողմը նրա զիտակցութիւնն է, այսինքն մտքերի իւրացումը։ Գրութեան արտաքին կողմը զրու-թեան մեքենայական կողմն է և խօսքերի ձևակիրագման որոշ պայ-մանները, այսինքն ուղղագրութիւնը։ Ներքին կողմը՝ զիտակցա-կան զրութիւնն է, այսինքն մտքերի նկարագրութիւնը, զրաւոր արտայայտումը։

Ամենից աւելի մեծ նշանակութիւն ունի ինչպէս ընթերցա-նութեան, նոյնպէս և զրութեան մէջ ներքին կողմը և աշակերտ-ներին կարգալ և զրել ուսուցանելու աստիճանը գնահատելիս կարող ենք խօսել միայն այն մասին, թէ ինչ աստիճան նրանք կարողացել են ձեռք բերել ընթերցանութեան ժամանակ մտքերն իւրացնելու և այն զրաւոր արտայայտելու, նկարագրելու հմտու-թիւնը, կարողութիւնը։

Դպրոցում կարդալ սովորեցնելիս կարծես թէ մենք հէնց այդ էլ զիտակցում ենք և կարգալու վարժութեան մշակման հետ միասին միշտ ձգտում ենք ձեռք բերել նաև մտքերի զիտակցա-կան իւրացում, այնպէս որ այստեղ հէնց առաջին տեղը բնուում է ընթերցանութեան ներքին կողմը։ Բոլորովին այլ է զրութեան միջոցին։ Վերջին դէպրում բոլոր տարրական դպրոցների ամբողջ ուսուցման ընթացքում կարմիր թելի նման անցնում է միայն արտաքին կողմը ձեռք բերելու ձգտումը—ուղղագրութիւնը։ Ինչ վերաբերում է զրութեան ներքին կողմին՝ այն է աշակերտներին մտքերը զրաւոր արտայայտելը վարժեցնելուն, մեղանում այդ

միանգամայն բացակայում է և կամ, ամենաշատը, վերջին տեղն է րոնում։ Ի՞նչ են սովորեցնում և ի՞նչ պահանջում աշակերտնե-րի զրաւորից նրանց զիտութեան չափն ստուգելիս և տարրական դպրոցի աջող աւարտման վկայագրեր տալիս։ Մի բան—միայն արտաքին կողմը՝ անսխալ թելաղբութիւն զրելու կարողութիւն։

Սակայն որքան տարօրինակ կթւայ մեզ, եթէ որ մենք սո-վորեցնէինք աշակերտին կարգալու մեքենայական կողմը և պա-հանջէինք նրանից միայն այդ։ Ի՞նչ կարող էր տալ աշակերտին այդպիսի ընթերցումը. միանգամայն ոչինչ։ Բայց չէ որ մեզ, ըստ երեսյթին, բնաւ տարօրինակ չի թւում այն, որ մենք աշա-կերտներին սովորեցնում ենք զրութեան միայն մեքենայական կողմը, կորցնելով ինքն ըստ ինքեան ոչ մի նշանակութիւն չու-նեցող այդ գործի համար դպրոցական ժամանակի համարեա կէս մասը։ Ի՞նչպիսի ջանքերով, ի՞նչպիսի խստութեամբ է պահանջ-ւում, մանաւանդ պետական տարրական դպրոցի աշակերտից, որ նա աւարտման ժամանակ իւմանայ, թէ հրաեղ պէտք է օ, որտեղ ֆ, որտեղ պէտք է յէ զրել, որտեղ իէ, արօ—օրօ և այլն՝ առանց հետաքրը-քըրելու, մինչև իսկ կարեսը չհամարելով հետաքրքրել, թէ ար-դեօք աշակերտը կարող է զրել զիտակցաբար, կարող է արդեօք թղթի վրայ արտայայտել այն մտքերը, որոնք կան նրա գլխում։ Ըստ երեսյթին այդ աւելորդ է։ Աշակերտն անսխալ թելաղբու-թիւն է զրում, նշանակում է, նա ձեռք է բերել զրութեան ամ-բողջ դժւարութիւնը, գաղանիքը։

Ահա այդպիսի ողորմելի վիճակի մէջ են գտնուում նաև մեր հայկական դպրոցների զրաւոր պարապմունքները և զեռ աւե-լին կասենք, որ մինչև իսկ մեր թեմական դպրոցները, ձեմա-րանն աւարտողները մեծաւ մասամբ մինչև իսկ զրաւորների այդ մեքենայական կողմից—ուղղագրութիւնից կազմում են և այդպիսի պատրաստութեամբ զուրս են զալիս կիւնք, զլխաւորապէս ուսու-ցիչ զառնում և յաճախ աշակերտների առաջ զրատախտակի վրայ տառասիանքներով զրում *):

Այժմ մի կարեսը հարց է առաջ գալիս, թէ իսկապէս ի՞նչ միտք, ի՞նչ նշանակութիւն ունի աշակերտի համար այդ ամբողջ ուղղագրութիւնը, զրութեան այդ մեքենայական մասն առանց գործադրութեան։ Աշակերտն այսօր վերջացրել է տարրական դպրոցը, թելաղբութիւնից լաւ թւանշան է ստացել, սակայն երբ

*) Տես. «Մեր ոսուցիչների ուղղագրութիւնը» Յ. Տ.-Միքա-քիանի։

Նրան առաջարկում են մի համակ զրել, նա այդ իր ուժերից բարձր համարելով, հրաժարում է և կամ ստիպւած զրում է մի համակ, որը թէ բովանդակութեամբ, թէ մտքերի կապակցութեան և թէ շարադասութեան այլ կողմերից մի ողորմելի բան է ներկայացնում: Մարդ զարմանում է, երբ կարդում է այզպիսի որևէ ինքնուրոյն գրաւոր աշխատութիւն, չի հաւատում, թէ այդպէս գրողները հինգ-վեց, զուցէ և աւելի տարիներ տանջւել են դպրոցում, բաւական թուղթ են մրտակ, սակայն այդ բոլորի արդիւնքը մտքերի այն ողորմելի արձանագրութիւնն է:

Բայց միթէ մենք իրաւոնք ունենք աւելին պահանջելու, քանի որ դպրոցը չի վարժեցրել մտքերն ինքնուրոյն կերպով գրաւոր արտայայտելու:

Ռուսական տարրական դպրոցներից տարեկան մօս չորս հարիւր հազար երեխաներ են աւարտում, որոնց սովորեցրել են գրաւորից միայն նրանց համար ոչ այնքան կարեւոր նշանակութիւն ունեցող թելազութիւն. բնաւ հոգ չի տարած, որ կեսնք մտնող այդ ահազին բանակը, որքան հնարաւոր է, կարողանայ արտայայտել իր մտքերը գրաւոր: Ուսուցման կատաղի թշնամի պէտք է լինել գրաւոր աշխատութիւնների նպատակը միայն այդ համարելու համար:

Սակայն այստեղ մի հարց է առաջ գալիս. արդեօք կարելի՞ է ուսուցման չորս արթայ ընթացքում տարրական դպրոցում սովորեցնել աշակերտին գրաւոր արտայայտել իր մտքերը: Գուցէ այդ անհնարին է, որի համար և տարրական դպրոցից պահանջւում է, որպէսզի նա սովորեցնէ աշակերտներին դոնէ գրութեան արտաքին կողմը—ուղիղ զրել: Այդպիսով յամենայն դէպս դպրոցը որևէ բան սովորեցրած կլինի:

Դրած հարցին իրեւ պատասխան ծառայել կարող է կոմս է. Ն. Տօլստոյի նշանաւոր յօդածը. «Ո՞վ ումից պէտք է սովորի զրել. գիւղացի երեխաները մեղանից, թէ մենք գիւղացի երեխաներից»:

Ուժ յայտնի չէ երեխաների շարադրութիւնների վերաբերեալ այդ զարմանակի գովեր, որտեղ կոմս Տօլստոյը իրեն յատուկ պարզութեամբ ապացուցանում է, որ տարրական դպրոցի երեխաները ոչ միայն կարող են նկարագրել, գրաւոր արտայայտել իրենց մտքերը, այլ և կարող են նկարագրել այնպէս գեղարեւութէն, որ ոչ թէ նրանք մեղանից, այլ մենք նրանցից պէտք է զրել սովորենք:

Բացի դրանից տարօրինակ կլինէր ենթազրել, որ իր մտքերը

բանաւոր, խելացի կերպով բաւական խնամքով արտայայտել կաստղացող աշակերտներին անկարելի կլինի երեք տարւայ ընթացքում սովորեցնել նոյն մտքերը գրաւոր արտայայտելու, որովհետեւ գրաւոր նկարագրութիւնը թէպէտ և տարրերւում է բանաւորից, սակայն ինքն ըստ ինքեան այնպիսի առանձին բան չի ներկայացնում, որ հիմնած լինի մտքերի բանաւոր նկարագրութեան այլ օրէնքների վրայ: Եւ եթէ աշակերտը կարողանում է արտայայտել իր միտքը բանաւոր կերպով, նա անկասկած նաև կղրէ այն, քանի որ զրել իմանում է: Այն ժամանակ ուսուցչին մնում է ցոյց տալ մտքերի նկարագրութեան հէսց մերկնայական կողմը, որ կայանում է նրանում, որ «նախ և առաջ—կասենք Տօլստոյի խօսքերով—բազմաթիւ առաջարկւած մտքերից և պատկերներից ընտրել մէկը, երկրորդ՝ ընտրել նրա համար բառեր և արտայայտել այն միտքը, երրորդ՝ մտքում պահել այն (միտքը) և նրա համար տեղ որոնել, չորրորդ՝ որպէսզի, մտարերելով գրւածը, կրկնութիւններ չանել, ոչինչ բաց չթողնել և կարելի լինի կապել վերջինը նախընթացի հնատ. վերջապէտ հինգերորդ՝ որպէսզի միտքամանակ, մտածելով և զրելով, մէկը միւսին շխանգարէ: *)

Որքան էլ որ երկար լինի այդ պայմանների շարքը, սակայն նրանք չեն ներկայացնում որևէ անհասկանալի բան, մանաւանդ չորս տարւայ ուսուցման համար: Միևնոյն ժամանակ՝ համարեալ բոլոր մատնանշչած կանոնները, աշակերտը սովորելու և նաև բանաւոր արտայայտելու ժամանակ: Եւ եթէ մենք սկսենք սովորեցնել աշակերտին մտքերը գրաւոր արտայայտելը մինչև իսկ ուսուցման երրորդ տարւանից, այն ժամանակ էլ այդ տարւայ վերջը նա արդէն բոլորովին պատասխան կերպով կիւրացնէ այդ րոլոր պայմանները: Շատ ուսուցիչներ անձամբ փորձել են այդ և հէսց աշակերտական շարադրութիւնների օրինակներից կարելի և տեսնել, որ այդ պայմանները նրանց համար ուսումնական տարւայ վերջը ոչ մի գժւարութիւն չեն ներկայացրել եթէ աշակերտներին իրենց մտքերը գրաւոր արտայայտելը, նկարագրելը սկսենք սովորեցնել ուսման ոչ թէ երրորդ, այլ հէսց առաջինը, ինչպէտ որ պէտք է լինի իրապէտ, համարձակ կարելի է յուսալ, որ երկրորդ տարւայ վերջը նրանք արդէն պատիրապեան գործի մերկնայական կողմին: Այսպիսով, ուրիշն, ոյն հարցի պատասխանը, թէ կարելի է սովորեցնել տարրական

*) Кому у насъ учиться писать..., «Педагогический журнал», изд. седьмое, 1887 г., стр. 234.

Դպրոցի աշակերտներին զբանոր ուստայայտել իրենց մտքերը, ու մի կասկածի հնթակալ չէ:

Բայց գուցէ անհնարին է աշակերտներին սպարեցնել նկարագրելու իրենց մտքերը, քանի դեռ նրանք չեն ձեռք բերել ամբողջ ուղղագրութիւնը: «Ի՞նչպէս եք դուք աշակերտներին գրեալիս ինքնուրոյն կերպով որեւէ նկարագրութիւն կամ շարադրութիւն, — ասում են շատերը, — քանի որ նու դեռ ուղիղ գրել չիմանում: Մենք պէտք է սխալների առաջն առնենք, նախազգուշացնենք, որ ուղղագրական սիմաներ չինեն և ոչ թէ խրախուսնենք, աշակերտներին ինքնուրոյն աշխատանք տալով և ճնարաւորութիւն չունենալով նախազգուշացնել աւելի ունենալիք սխալներից, մենք գրանով խրախուսում ենք տառափախաներով լի, անզրագէտ գրութիւններ, նամակներ գրել»: Եւ աննկարագրելի սարսափով նայում են այդպիսիները թերթիկին, որի վրայ աշակերտը թոյլ է տեև իրեն գրելու իր ընկերոջը տառնեակ ըառեր և սխալներ արել: *) Ո՞րպիսի հիւանդաղին եռանդով արգելում են այդպիսիները աշակերտին ամենայն տեսակ ինքնուրոյն նամակներ, գրութիւններ գրել: Անա հէնց այդպիսի նկատումներով առաջնորդելով նրանք միջնակարգ զպրոցների լի և լՎ զատարաններում, որիմ 6—7 տարի ուսունելուց յետոյ միայն նարաւոր են նամարում աշակերտին տուածին անդամ մաքերը զրաւոր արտայալներ տալ: Այդպիսի մարզիկ իրենց խօսքերի ճշառական խորին համոզմած ասում են, որ տարբական զպրոցում, որտեղ աշակերտները գեռ չեն սովորել կանոնաւորագէս ուղիղ գրել որեւէ նկարագրութիւն, առաւել ևս շարագրութիւն, գրելու ժամանակում իրենել չի կարող:

Ի՞նչ կարելի է ասել այդ տեսակ անձանց զատութեաւելինք երի մասին։ Մի բան միտայն—այդպիսինքների համար զրութեանը չունի այնքան նշանակութիւն, քանի որ նա ծառայում է մաքերի արտայատութեան համար, նրանց հոմար կարեսը է և նրանց տեսակիւով զրութեան վլխաւոր նպատակը պէտք է լինի այն, որ նա քերականօրէն կանոնաւոր, ուղիղ զրած լինի. այդպիսինքների համար, եթէ կարելի է այսպէս ասել, գրութիւնը գրութեան համար է։ Եւ ինարկէ, այդպիսի հայեացը ունենալու գեպաւմ նրանք իրաւացի են, նշանակելով գեղեցիկ շարագրութեան համար աշակերտին վատ թւանշան միմիւայն նրա հոմար, որ նա իրկու-երեք սխալ է արել:

^{*)} Օբխակելի տարրական դպրոցների զրաւոր ամրող ծրագրի մասին մենք կխօսենք սրանից անկախ մի այլ յօդւածում:

Սակայն հարց է ծագում, թէ ինչ աստիճան ուղիղ է այդ
հայեացըք: Հերքել այդ, կարծում եմ, կարիք չկայ: Տարօրինակ
էլ կինէր ապացուցել այն ճշմարտութիւնը, թէ զրութիւնն ինքն
առանձնապէս այնքան էլ նշանակութիւն չունի, այլ միայն մըտ-
քերի զրաւոր արտայացութեան մի միջոց է: Այդպիսի մարդ-
կանց շուաշուա պէտք է յիշեցնել, որ Պուշկինն ու Գօդոն էլ
սիալներով են զրել: Սակայն այդպիսիներին ոչ մի մատնա-
նշում չի կարող օգնել, որովհետեւ նրանց հայեացըներն արդինք
չեն սրեւ բանի վրայ հիմնաւորւած համոզունքների, զա ուղղա-
կի մի հիւանդութիւն է, և նը անց հարկաւոր է ոչ թէ
համոզել այլ բուժելու մասին:

Այս բարսից յետոյ զուցէ շատերին թւայ, որ մենք առ
ոչինչ ենք համարում ուղիղ, անսխալ զրաթիւնը Բնաւ ոչ ձիշտ
է, լաւ է, եթէ աշակերտը, թէկուզ և սխալ ուզգագրութեամբ,
բայց այնուամենայնիւ կարողանում է զրաւոր արտայայտել իր
մտքերը, սակայն համաձայն ենք նաև, որ առաւել լաւ կլինի, եթէ
նա կարողանայ զրել նաև անսխալ։ Միայն ուզգագրութիւնը,
զրաթեան այդ արտաքին կողմը, չպէտք է զնել առաջին պլանի
վրայ, նա չպէտք է հանդէս դայ իրքի աւարտման ինչ որ զլիսա-
ւոր, ուրիշն առարկայի կաւ չի լինի, որ աշակերտը ուղիղ, ան-
սխալ զրել իմանալով, անկարող լինի զրաւոր արտայայտել իր
մտքերը։

Ոմանք այն կարծիքն են, որ Եթէ զործն այլովէս տարւի,
այսինքն Եթէ հետեւնք զբանարապէս զբութեան ներքին կողմին,
սաստիկ կվասի արտաքինը և աշակերտները չեն սովորի ան-
ոխակ զբել:

Նախ և առաջ, եթէ այդ այլպէս էլ լինէր, մահաւանդ տար-
բական զպրացամ, կարուսալ համեմատաբար այնքան էլ միծ չէր
լինի և, յամենայն զէօլու, աշակերտը ձեռք բերած կիննէր կարե-
սորագոյնը՝ իր մաքերը զրաւոր կերպով նկարագրելու հմտութիւ-
նը, իսկ երկրորդ՝ եթէ զրաւոր աշխատութիւնները խելացի հիմ-
քերի վրայ գրւին, այդպիսի երկոյցի տեղի ունենալ չի կարող,
որովհետեւ ոչինչ չի խանգարում ուսուցչին, հետամուտ լինելով
զրութեան ներքին կողմին, պարա ու պատշաճ ուշադրութիւն
զարձնել նաև արտաքին կողմի վրայ:

Բացի զբանից չպէտք է մոռանալ, որ ամենայն աշխատանքը՝
որ կասարւում է աշակերտների կողմէց բոլորովին մեքենայօրէն,
առանց ուշադրութեան մասնակցութեան, երբէք չի կարող տալ
որևէ գրական հետեանք: Վերջիւ զբից արտազրելու կամ բաց
թողած տառերով բառերի տառերի տեղու խաչիներ են զբած

լինում) վարժութիւններ անելու օպտին այն ստորհան ընդարձակ չափերով պլուզաղանգա է մուռմ, որ մենք զանում ենք, թէ այդ միանգամայն կմասէ զրաւոր աշխատութիւնների բուն նպատակին:

Ներկայումս ազգարդիւն եղանակով տարւող այս և սոյնանման այլ զրաւոր աշխատութիւնները բացի յոդնածութիւնից, ձանձրոյթ պատճառելուց ոչ մի օգուտ տալ չեն կարող միենոյնը միքանի անգամ արտազրելուց յետոյ զարձեալ սխալներ կլինեն և աշակերտը՝ վերջը զգալով այդպիսի զրաւորների ապարդիւն լինելը, սկսում է առանարակ դեպի ամենայն տեսակ զրաւոր աշխատնք առանձին արհամարհանքով վերաբերել:

Մինչդեռ եթէ ցոյց տրի աշակերտին, թէ զրութիւնը միմիայն անխորհուրդ, անիմաստ կողմէ չունի, որ նա ծառայում է իրրեկ զենք մարդու մտքերը նկարազրելու համար, մի բան, որ յաճախ աշակերտը՝ չի էլ կասկածում, մանաւանդ տարրական զպրոցում, այն ժամանակ կերեի, թէ որպիսի մեծ գոհունակութիւն կպատճառեն նրան զրաւոր աշխատութիւնները: «Ամեն ոք, որ սովորել է տառերը զրել, սուռմ է Տօլստոյին իր «Եաս-նո-Պոլեմնկայիա շկոլա» հանդէսի մէջ, զրելու անյագ ցանկութիւն է զգում իր մէջ և սկզբներում զպրոցի և աշակերտների բնակարանի դուսերի, արտաքին փեղկերի և այլ յարմարաւոր համարւած տեղերի վրայ խաղիսկած են լինում բառեր և բառեր: Իսկ ամբողջ նախազառութիւններ, դարձւածքներ զրելը նրան էլ աւելի մեծ գոհունակութիւն է պատճառում»: *) «Ճարագրութիւն զրելը—առում է նա մի այլ տեղում—կազմում է աշակերտների սիրեցեալ պարապմունքը: Հէնց որ զպրոցից դուրս աւագ աշակերտների ձեռքը թուղթ և մատիտ է ընկնում, նրանք զրում են իրենց ստեղծագործած որևէ պատմւածք: Եւ վերջապէս շատերն անշուշտ անձնական փորձով զիտեն, թէ ինչպէս երեխանները սիրում են շարազրութիւն զրել: Եւ եթէ զրաւոր աշխատութիւնները հէնց այդպէս կատարեն, եթէ զործին այնպէս սիրով վերաբերեն, երեխաններն ինքն ըստ ինքեան միշտ ընդառաջ կզնան անսխալ զրութեան. այսպիսի դէպրում ուսուցչին մենում է միայն դեկավարել, առաջնորդել, յուշարարութիւն անել նրանց. զրաւորների զործն այս կերպ դրւած լինելու դէպրում զրութեան արտաքին ձեր ոչ միայն չի կարող տուժել, այլ ընդհակառակը, կարող է աւելի լաւ ձեռք բերել:

Բացի զրանից, չպէտք է մոռանալ, որ զրութիւնն այդ եղա-

*) Педагогическая статья, стр. 287.

նակով տանելու գէպքում, որտեղ աշակերտը տեսնում է գրած խօսքի մէջ իր մտքի արտայայտութիւնը, «ձեռք է բերում—ինչպէս ասում է Տօլստոյը—լեզւի ուսումնասիրութեան սկզբնաւորութեան ինքն ըստ ինքեան դժւարին զործը՝ հաւատ դէպի բառի ձեր հաստատուն լինելը, և այն էլ ոչ միայն ապագրւած, ալ և իր բանաւոր խօսքի»: *)

Քննիլով համառօտակի տարրական զպրոցների կրութեան ուսուցման ժամանակակից զրութիւնը, անցնենք այժմ քննելու աշակերտներին իրենց մտքերը զրաւոր կերպով արտայայտնեն ուսուցանելու մեթոդը: Տեսնենք այժմ, թէ ինչպէս ներկայումս ոչ միայն ատրրական զպրոցները, որտեղ ինչպէս մենք տեսնաք, այդ կողմի վրայ, զանազան հանգամանքների շնորհիւ, պակաս ուշազրութիւն է գարձնում, այլ և ամենայն միջնակարգ զպրոց ձգում են ձեռք բերել ուսուցման այդ էականագէս կարեսոր կողմը: Ահա այդ պատճառով աչքի անցկացնենք և քննենք աշակերտների այն ընթացքը, որ ներկայումս զործագրւում է զպրոցներում այդ նպատակին համեմու համար, զրահետ միաժամանակ պարզենք նաև այն, թէ ինչ աստիճանի նպատակայարմար են և արդիւնաւոր այդ աշխատանքները, և թէ արդեօք իսկապէս այդ աշխատանքները հասցնենմ են աշակերտին ու զի զան մի ջ տ կ ան ճանապարհով այն նպատակին, որին մենք ձգտում ենք հասցնել նրան:

V

Ներկայումս զլիսաւորապէս պետական զպրոցներում և մասնաւորապէս մեր հայկական զպրոցներում աշակերտներին զրութեան ներքին կողմին, այսինքն զիտակցական զրութեանը, մտքերի նկարագրութեան վարժեցնելու համար նախազառութիւններ են զրել տալիս: Այդ պարապմունքը կատարվում է այսպէս: Գրատախտակի վրայ զրւում են մի շարք հարցեր կամ մի շարք չվերջացած նախազառութիւններ**:): Աշակերտները պէտք է իրենց տետրերում զրեն, նայած վարժութեան, կամ զրած հարցերի լիտկատար պատառխանները և կամ վերջացած նախազառութիւններ: Այդ վարժութիւնների նպատակն է՝ սովորեցնել ամերակին նախազառութիւններն ուղիղ, կանոնաւոր զրել:

*) Педагогическая статья, стр. 188.

**) Կան հեղինակներ, որոնք իրենց հրատարակած զանազրը բերի մէջ մտցնում են զրաւորների համար այդպիսի վարժութիւններ:

Մեզ համար միանգամայն անհասկանալի է, թէ որտեղից է առաջ եկել այն ենթադրութիւնը, թէ բառեր գրելը սովորած աշակերտն անկարող է նախադասութիւններ գրել կամ գրէ այդ սիրալ։ Միթէ կարելի է ենթադրել, թէ աշակերտը, մտածելով, որ «գուրսը ձիւն է գալիս», կարող է որևէ մի այլ բան գրել, կամ կրքէ այդ միենոյնը որևէ այլանդակ սիսալ ձևով։ Կարծում եմ, որ եթէ աշակերտը կարողանում է մի նախադասութիւն արտայայտել բանաւոր, նա կարողանայ նաև գրել այն, իսկ եթէ այդ այդպէս է, այն գէպօրում ինչ միտք ունի աշակերտին սովորեցնել նախադասութիւն գրել, սովորեցնել նախադասութեան ձեզ, երբ նա ըմբռնել է այդ ձեզ գետ երեք տարեկան հասակում։ Զէ՞ որ երեք տարեկան երեխան էլ կարողանում է արտայայտել իր մտքերը և արտայայտում է այն մտածողութեան միենոյն հիմնական օրէնքներով, ինչպէս և հասակաւորը՝ բազգատելով մտածման նիւթերը այս կամ այն կողմից մէկ-մէկու ճետ։ «Որքան էլ որ միծ լինի արտաքուստ հասակաւորի և մանկան մաքի միջն եղած վիճը (մտքի օրեկաների կողմից), — սում է Սէչէնովն իր «ԸԼԵ-ՄԾԻՏ ՄԱԾԼԻ» աշխատութեան մէջ, — սակայն նրանց միջն միջն էլ նկատել է սերա ազգակցութիւն մտքի յօրինւածքի։ Մարմանաւով բառի մէջ, ինչպէս մանկան, նոյնպէս և հասակաւորի միտքը միջն ընդունում է միենոյն ձեզ։ Շնորհիւ այն հանգամանքի, որ այդ ձեռ անփոփոխ է զանազան հասակի, զանազան ժամանակաշրջանների և զարգացման աստիճանի մարդկանց համար, մեզ համար միակերպ հասկանալի են փայրենու և մանկան մտածութիւնը, մեր ժամանակակիցների և նախորդների մտքերը։ Շնորհիւ հէնց այդ բանի մարդկութեան կեանքում զայտութիւն ունի մտքերի փոխանցում (որօքմտօ ՄԱԾԼԻ), որ ձգւում է դարեր շարունակ նշանակում է, արտաքին ձեփ կողմից միտքը ներկայանում է նոյնքան մշտակայ արգիւնք, ինչպէս և որևէ կենսական երեսյթ, որի հիմք կազմում է մի որոշեալ կազմակերպութիւն։^{*)}

Այստեղից պարզ երես է, որ աշակերտին նախադասութիւն գրել սովորեցնելը, նրան նախադասութեան ձեփ կազմել սովորեցնելը միանգամայն տեկորդ գործ է, որովհետեւ նա առանց այն էլ վագուց իմանում է այդ։ Ուրիշ բան է, եթէ որ մտքի հղանակը զարգանար, այն ժամանակ հասկանալի կլինէր այդ տեսակի արժութիւնների գործադրութիւնը, որսնք կձգտէին նրա (մտքի) զարգացմանը. բայց մենք տեսնում ենք, որ մտքի եղանակը ենթակայ չէ զարդարութեան, և եթէ «եր-

^{*)} «Научное Слово», 1903 թ. I գրքի 43—44 երես։

րեմն—ինչպէս ասում է Սէչէնօվը՝ կարդում ենք և լսում, թէ միտքն ընդունակ է աւաջադիմելու, այդ չի նշանակում, որ մարդկութիւն զարգացման հետ միասին առաջադիմում է նաև մտքի եղանակը, նա, ընդհակառակը, մնում է անփոփոխ. աճում, զարգանում է միայն մտածման նիւթերի հորիզոնը և նրանց միջն եղած մասնաւոր փոխադարձ յարաբերութիւնները։

Բայց գուցէ այն վարժութիւնները, որոնց մասին մենք խօսեցինք, օգուտ տալ կարողանան աշակերտներին նրանով, որ կսովորեցնեն նրանց գրել լի ա կ ա տ ա ր նախադասութիւններ^{*)}, այսինքն կսովորեցնեն աւելի ընդարձակ և ազատ կերպով համեմատութեան մէջ դնելու մտածելի օբեկտները, գտնելու նրանց միջն առընչութիւններ, փոխադարձ յարաբերութիւններ և այդ կերպ ստացւած միտքը մարմացնելու բառերի մէջ, արտայացնելով այն գրաւոր, եթէ խսպէս մեր վարժութիւնները տանում հասցնում են այդ նպատակին, այն գէպօրում նրանք, ինարկէ, ահազին նշանակութիւն ունեն։ Ահա այս պատճառով աշխատենք պարզաբանել թէ յիշեալ վարժութիւններն ինչ տափհան կարողանում են հասցնել այդ նպատակին։

Աշակերտներին տրւում են այսպիսի հարցեր, որոնց պատճառամբ նրանք գրելու են տեսրերում։ «Ո՞րպիսի ամանունները շինում են փայտից»։ աշակերտը գրում է, «Փայտեայ ամանունները շինում են փայտից»։ «Որպիսի» բառի տեղ դնելով «փայտեայ» բառը, պատասխանն արդէն պատրաստ է։

Այժմ հարց է ծագում, թէ արգեօք այս գէպօրում մի այնպիսի մտաւոր աշխատանք անդին ունեցաւ, որ ուղղած լինէր աշակերտի իր սեփական միտքն արտայայտելու կողմը և թէ արշութեալ այսուհեղ մտքի գրաւոր վիրաբագրութիւն, նկարագրութիւն անդին ունեցաւ։ Մեզ թւում է, թէ ոչ այս և ոչ էլ այն Աշակերտը գրել է պատասխանը միանգամայն մեքենայարար և այդ երեսում է հէնց պատասխանի սիսալ լինելոց։ Նախ և առաջ արւած սիսալ հարցը պէտք է ուղղել այսպէս. «Ի՞նչից են շինում փայտեայ ամանունները»։ Այդ հարցին պէտք է պատասխաններ այսպէս. «Փայտեայ են շինում փայտեայ ամանուններ»։

Այս օրինակը վիրցրած է մի աշակերտի ահարակից։ սոյն ամանունն և այլ սիսալ պատասխանների միջն կարելի է պատահել աշակերտական տեսրերում։

Բայց մի կողմ թողնենք այդ և ընդունենք մի բոսկ, թէ

^{*)} Տրւած հարցերին լիակատար պատասխաններ տալու, այսինքն ընդարձակ նախադասութիւններ արտայայտելու մտքով։

պատասխանները ճիշտ են. բայց այն ժամանակ ոչ ոք չի կարող հաւատացնել, որ աշակերտն անդիտակցարար չի կատարել այդ աշխատանքը, որովհետև հէնց աշխատանքի այդ ձեզ հարկադրում է աշակերտին գլուխ բերել այդ անդիտակցարար, այն է՝ հարցի միայն մի բառը փոխել եւ շնորհի այդպիսի վարժութիւնների մէջ մտքի աշխատանքի բացակայութեան, նրանք կլինեն խիստ անհնատաքքի և ձմենձրալի աշակերտների համար:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ այդ սկզբնական վարժութիւնները, որոնք սովորեցնում են աշակերտին իր մտքերը զրութեան ժամանակ որպէս թէ լիակատար արտայայտել, ոչ մի հիմք, ոչ մի միտք չունեն:

Այժմ անցնենք մի այլ վարժութեան, որ յանձնաբարութ է գործադրել զրութեան ն ե ր ք ի ն կ ո դ մ ը աշակերտին ուսուցանելիս: Այդ վարժութիւնը քիչ է տարրերում սուաջնից և ներկայացնում է որոշ կարգով դասաւորւած հարցերի միենոյն շարքը, արւած միայն մի որևէ առարկայի մասին: Դրած հարցերին աշակերտների տւած բոլոր պատասխանները միասին կազմում են այդ առարկայի նկարագիրը: Այդպիսի վարժութեան նպատակն է՝ սովորեցնել աշակերտներին որևէ առարկայ նկարագրելիս մտքերը որոշ յաջորդականութեամբ արտայայտել:

Բայց տեսնենք, թէ արդեօք այդպիսի վարժութիւններով կարելի՞ է այդ նպատակին հասնել:

Տրում է, օրինակի համար, սեղանի, ունեակի կամ որևէ կենդանու մասին մի շարք հարցեր: *) Աշակերտը գրում է լիակատար պատասխաններ այդ հարցերին և հէնց այդ պատասխանները կազմում են աշակերտի առաջ դրած առարկայի նկարագիրը: Մակայն ինչ են տալիս այդ պատասխաններն աշակերտին, ինչ կարող է տալ նրան այս կերպ, բոլորովին անդիտակցարար կազմուած նկարագիրը: Պատասխանները նա գրելու է նոյն կերպ, ինչպէս և առաջ է գրել այսինքն առանց նոգեկան զործողութեան որևէ մասնակցութեան, ուղղակի մեքենայաբար. արւած առարկայի նկարագիրն ստացւեց անդիտակցարար, մինչև իսկ նրա համար անսպասելի կերպով, այս բոլորից յետոյ հասկանալի է, որ այսպիսի նկարագրութիւնը, որ նպատակ ունի ուսուցանելու աշակերտներին մտքերն արտայայտել, դժւար թէ նրանց համար որևէ նշանակութիւն ունենայ: Զէ՞ որ նրանք չնկարեցին իրենց

*) Օրինակի համար՝ սեղանին ինչ է, ինչից են շինում սեղանը, ով է շինում սեղանը, սեղանի մասերը որոնք են և այլ այսպիսի հարցեր:

աչքերի առջև գտնւած որևէ առարկայ, կամ իրենց հոգու մէջ ունեցած որևէ պատկեր. բնոււ իրենց սեփական մտքերը չարտացայտեցին, այլ զրեցին արւած հարցերի ինչ որ պատասխանները պատեցէ և տանց մտածելու այն մասին, թէ ինչի մասին են զուցէ: Այն գէպքում հակա առանձին հարցերին պատասխաններում: Այն գէպքում հակա կառվորեն, կվարժւեն մտքերը վերով, աշակերտներն ինչ կերպ կսովորեն, կվարժւեն մտքերը վարժադրելու որոշ յաջորդականութեան, այսինքն նկարագրութեան պլանը: Եւ վերջապէս սիթէ որևէ առարկայի մասին եղած չոր ու ցամաք հարցերի շարքը որևէ որոշ պլան կարող է ներկայացնել: Կարծում ենք, որ ամեն մէկը կարող է կազմել միենոյն առարկայի նկարագրութեան համար առանձին ուսակի, տարրեր բնաւորութիւն կրող հարցեր, հետեւպէս և կատացրեն բարձրաթիւ պլաններ, որոնցից իւրաքանչիւրը միւնեանցից կարրերեւն իրենց հարցերի գասաւորութեամբ: Եւ եթէ այդ այդպէս է, այն գէպքում հարց է ծագում, թէ աշակերտին որ պլանն պէտք է վարժեցնել: Այսպիսով մենք տեսնում ենք, որ այս տեսակի վարժութիւնն ևս նպատակի չի հասնում:

Վերջապէս անցնենք զպրոցներում գործադրուող և բ բ ո ր դ տ ե ո ա կ ի գրաւոր վարժութեան, որ նոյնպէս նպատակ ունի աշակերտներին սովորեցնել իրենց մտքերը գրաւոր արտայայտել: Այստեղ խօսքը վերաբերում է կարդացածի միտքը, բովանդակութիւնը գրաւոր արտայայտելուն:

Այս տեսակի վարժութիւնները նպատակ ունին սովորեցնելու աշակերտին՝ արտայայտել գրաւոր կերպով իր մտքերը կանոնաւոր, պարզ և հետեւպարար: Սոյն վարժութիւնները տարւում են այսպէս, նախ աշակերտին արւում է կարգացածի մանրամասն պլանը, ապա առանձին մասեր ցանկի ձևով, և վերջապէս՝ բոլորովին առանց պլանի, թողնելով իրեն աշակերտին թէ կարգացածը մատքերելու և թէ նկարագրելու այն:

Ինչպէս ասացինք սոյն վարժութիւնների նպատակն է՝ ուսուցանել աշակերտին գրաւոր արտայայտել իր մտքերը: Բայց ինչ, արդեօք այդ եղանակի վարժութիւններով յիշեալ նպատակին կարելի է հասնել: Գործնականութիւնն ասում է, բնաւ. շատ յաճախ կարգացածի բովանդակութիւնը գրել կարողացող աշակերտը միանգամայն անզօր է լինում գրել-որևէ շարադրութիւն, այսինքն գրաւոր արտայայտել, նկարագրել իր ո ն ե փ ա կ ո ն մտքերը, նա զեռ անզօր է ինքնուրոյն կերպով որոշ յաջորդական թիւամբ արձանագրել իր մտքերը, նա չի կարող օգտվել շարադրութեան համար իր հոգու մէջ ունեցած նիթից, նա զեռ չի րադրութեան համար իր հոգու մէջ ունեցած նիթից:

իւրացրել գործի մեխանիզմը։ Եւ ամեն ոք, ով պարապել է դըպ-
րոցում մայրենի լեզւի դասաւութեամբ, գիտէ, թէ ինչպէս ընդ-
հանրապէս միջնակարգ դպրոցների, մասնաւորապէս մեր չարա-
բախտ թեմական դպրոցների Յ-րդ, 4-րդ դասարանի սաները ել-
կու-երեք տարի շարունակ յօդամների բովանդակութիւններ գրե-
լուց յետոյ, միանգամայն շւարած են մնում, երբ առաջարկում է
նրանց մի որևէ շարադրութիւն զրել։ Մենք անձամբ գիտենք,
թէ ինչպէս մի ժամանակ (այժմս էլ կարծում ենք նոյնը կլինի)
Գէպրգեան ճեմարանի ուսուցիչները զանդատում էին, որ իրենց ա-
շակերտներն ամեն կերպ խոյս են տալիս շարադրութիւնից, որով-
հետեւ բնաւ չփափեն շարադրութիւն զրել։ մինչև իսկ հինգերորդ,
վեցերորդ դասարանների աշակերտները սարսափում էին, երբ
նրանց առաջարկում էր որևէ ինքնուրոյն բան զրել։ Բայց ին-
չու է այս այսպէս։

Հստ երեսյթին կարգացածի նկարագրութիւնն աշակերտին
տալիս է այս ամենը, ինչ որ անհրաժեշտ է գործի իւրացման
համար. թէ նիւթ, թէ այդ նիւթից օգտեկու օրինակ, նմուշ, թէ
նկարութեան արտաքին ձև, թէ, վերջապէս, օրինակելի ոճ. ա-
շակերտին մնում է միայն մի բան. սովորել նմանեցնելու այդ
բոլոր պատրաստի նիւթին. Բայց չէ որ այդ նմանողութիւնը,
ինչպէս ասացի, շատ քիչ արդիւնք է տալիս. Ի՞նչն է այդպիսի
տարօրինակ թիւրիմացութեան ուստանառը. Պատճաննայն է, որ այդ
մեթոզը հոգեբանական հիմքից զուրկ է։ Նմանողութեամբ սովո-
րեցնել կարելի է արհեստը, բայց ոչ արհեստը. իսկ մտքերը զրա-
ւոր արտայայտելն արհեստ չէ։ Ինչպէս ամենայն ահսուկ արհես-
տի ուսուցման ժամանակը, այսուեղ ևս մենք պէտք է նախ և առ-
աջ անմիջական կերպով վարժեցնենք աշակերտի մէջ այն ըն-
դունակութիւնը, որը մենք ցանկանում ենք զարգացնել այսինքն
պէտք է այդ ընդունակութիւնը զարգացնելու համար նրան ինք-
նուրոյն զործունէն էւ թե են հնարաւորութիւն տալ այն ինչ
նմանեցնելը ինքնուրոյն զործունէութեան ոչ մի վարժութիւն չի
տալիս. «Կառկած չկայ—ասում է Ռոշբնկին—որ երեսաներն
ամենից աւելի սովորում են նմանեցնելով այլոց, սակայն սիսու-
կիներ կարծել, որ նմանողութիւնից ինքն ըստ ինք եւն
կը դիւ ինքն ուրոյն զործունէն էւ թիւն ։ Նմանու-
զութիւնն ինքնուրոյն զործունէութեան շատ նիւթեր է տալիս,
բայց եթէ նմանողութիւնից անկախ ինքնուրոյն զործունէութիւն
չիներ, այն դէպքում բան էլ չէր լինի նմանելու։ Ինքն ու-
րոյն զործունէն էւ թիւնը երեան չի գտէի ու
յետոյ՝ հասակ ի հետ, սակայն նըս հատիկը

արմատացած է մարդու հոգու հետ միասին
ծնւած ազատ կամքի մէջ. այդ համարի կին պէտք
է տալ թէ ժամանակ թէ շրջան՝ զարդարութուն
համար։ *)

Բայց աշակերտը կարգացածը նկարագրելու դէպքում յօ-
գուտ ինքնուրոյն զործունէութեան, յօգուտ իր մտքերը նկա-
րագրելու ինչ վարդութիւն է ձեռք բերում։ Միթէ նկա-
րագրած նիւթը արդիւնք է նրա մտածողութեան, որոշ մտած-
ման նիւթ եղած առարկաների համեմատութեան։ Միթէ
այլոց մտքերը նկարագրելով մենք սովորեցնում ենք աշա-
կերտին մտածել իր սեփական մտապատճենների և գաղա-
փարների մասին, սախալում ենք նրա ուղեղին աշխատել,
զննել մտաղատիւնների և գաղափարների միջև եղած նմա-
նողութիւնները և կապել նրանց միմեանց հետ դատողութեամբ,
հարկագրում ենք այդպիսով ստացած դատողութիւնները մար-
մացնել խօսքի մէջ և արտայայտել այն գրութեան մէջ։ Ոչ, եր-
բէք։ Մենք ստիպում ենք աշակերտին սիսու կրկնել և այն էլ
երբեմն մինչև իսկ ոչ թէ մտքերը, այլ նախագաւութիւնները,
որոնք նա լսել է որոշ յաջորդականութեամբ։ Ընդհանրապէս շատ
քիչ հոգեկան աշխատանք կայ, և իրենց մտքերի վերաբարպե-
թիւն բնաւ գոյութիւն չտնի։

Շատ հեռու չզնանք և հինց յիշենք այսակ մի այլ արևել-
ուի՝ նկարչութեան մասին։ Մի ժամանակ նկարչաթեան
գուստաւութեան ամբողջ մեթոզը կայանում էր նմանեցնելու և
մոփօրինակիլու մէջ և այդ էր համարեւում աշակերտին նկարչու-
թիւն սովորեցնելու միակ ճանապարհ։ Սակայն անցան այդ
ժամանակները և մարդիկ բոլորովին հրաժարեցին այդ մեթո-
զից, համարելով բոլորովին անպէտք, որովհետեւ անմիջական
ողիք ճանապարհով չէր տարւում զէպի իր զրած նպատակը։
Եւ միթէ զրութեան ուսուցման վերաբերմամբ մեզանում նկար-
չումն զործագրւող մեթոզը բոլորովին նման չէ նկարչութեան
մէջ մի ժամանակ զործագրւող ընդօրինակիլու կամ նմանեցնե-
լու մեթոզին, և այս բոլորից յետոյ մենք գետ շարունակում ենք
ամուր պահպանել զրութեան այդ մեթոզը, մինչև իսկ չհնոր էլ
մտածում փոխարինել մի այլ մեթոզի։

Այսպիսով, որին, մենք ահսում ենք, որ աշակերտներին
իրենց մտքերը զրաւոր արտայայտելը սովորեցնելու այն ճանա-
պարհը, որ զործագրւող է զորոցներում ներկայում, ինչպէս

*) Անտրոպոլոգիա, տ. II, стр. 409, изд. девятое.

օրինակ, տրւած հարցերի պատասխանները գրելու, տրւած պլանով նկարագրելու, կարգացածը հարցերով և առանց հարցերի նկարագրելու ձևերով, չի կարելի գոհացուցիչ համարելու, որպէին չէ առաջնորդում աշակերտին ուղիղ, անմիջական ձանապարհով գէպի նշանակած նպատակը:

Այժմ հարց է ծագում, հապա յիշ պէտք է անել. ինչպէտք է փոխարինել այդ ճանապարհը, որ սրբագործւած է աւանդութիւններով և երկարաժեայ պրակտիկայով դործազրութեամբ. Պատասխանը շատ պարզ է, պէտք է անել այն, ինչ որ արւած է նկարչութեան մէջ, այդ ճանապարհի հիմունք կազմով նմանողութիւնը փոխարինել բնականով և սովորեցնել աշակերտին չենցորինակելու, չնմանեցնելու այլ նկարագրութիւն գրաւուր այլ այլ այտել իր մտքերը Այդ պատճառով ամենաբարեւոր և արդիւնաւոր մեթոդ համարել կարող է ոչ թէ այլոց մտքերը նկարագրելը, այլ շարագրութիւն գրելը, այս ինքը ն այն նիւթի նկարագրութիւնը, որ ունի ակերտն իր հոգու մէջ, այդ կընի աշակերտին իր մտքերը գրաւոր արտայայտելն ուսուցանելու ամենաբնական ճանապարհը. Այս գէպքում աշակերտը ոչ մի կերպ չի գրի անհամառ բաներ, ոչ մի գէպքում չի գրի այնպիսի բաներ, որոնք նրա մէջ չեն կապւած մտապատկերների հետ, նա կը միայն այն, ինչ որ ունի իր հոգու մէջ, նա կվարժէ հէնց իր մտքերը նկարագրելու մէջ:

Բացի դրանից, գործն այս կերպ առաջ տանելու գէպքում աշակերտի մէջ մշակում է մտքերն աղատ նկարագրելու ամենաշերեւր և անհրաժեշտ պայմաններից մէկը. այդ գրութեան ժամանակ ունեցած վստահութիւնն է գէպի իր նկարագրութիւնը. Այդ վստահութեան բացակայութիւնը յանախ հանդիսանում է ամենամեծ խանգարիչ մտքերի աղատ արտայտութեան ոչ միայն աշակերտների, այլ և արդէն գպրցական կեանքն անցկացրած հասակաւորների համար. Ո՞ւմ յայտնի չէ, թէ ինչպէս յանի մարդիկ միայն երենց անվստահութեան պատճառով բնաւ չեն կարողանում ինքնուրոյն որևէ բան գրել, թէկուզ մի հասարակ նամակ, այդպիսիները, նախ քան գրելը, գեռ տասն անգամ ջնջում, որբագրում են իրենց գրածը. Այս անվստահութիւնն անմիջական արդիւնք է մեր նմանեցնելու, բնորինակելու մեթոդին, որն աշակերտին մտքերն արտայայտելու բնաւ աղատութիւն չի տալիս. Տէք նրան այդ աղատութիւնը, տէք նրան հասարաւութիւն վարժելու իր մտքերը նկարագրելու մէջ և անհրաժեշտ վստահութիւնն ինքն իրեն առաջ աշակերտի մէջ:

Անշատ շատերի համար տարօրինակ կթւայ, թէ ինչպէս կարելի է ստիպել աշակերտին ուղղակի արտայայտել, նկարագրել իր մտքերը, միանգամմից շարագրութիւն գրել. Կրկնում ենք, որ կար ժամանակ, երբ նոյնպէս տարօրինակ էր թւում սկսնակ աշակերտին ուղղակի բնականից նկարել տալիք. Այժմ արդէն այդ մեթոդը համարւում է միակ խելացին, բանականը, որի միջոցով առաջին անգամ այդ գործագրող ամերիկացիները ձեռք ըերին այն, որ իւրաքանչիւր տարրական դպրոցի սան կարողանում է նկարել:

Այժմ շատերը կհարցնեն. ինչպէս կարելի է աշակերտին շարագրութիւն գրել տալ, երբ նա իր հոգու մէջ թէ նիւթ քիչ ունի, թէ այդ նիւթից օգտւել չի կարող և թէ նրան յայտնի չէ զեր գործի մեքենայական կողմը, այսինք նա չգիտէ նկարագրութեան որոշ պլան կազմելը և վերջապէս նա գեռ նկարագրելու համար լաւ ոճ չունի, մինչդեռ կարգացածը նկարագրելիս մենք տալիս ենք նրան թէ նիւթ, թէ նրանից օգտւելու նմուշ, օրինակ, թէ նկարագրելու յաջորդականութիւն և թէ, վերջապէս, օրինակելի ոճ:

Վերլուծենք այս ինդիրը:

Ասում ենք, թէ աշակերտը քիչ նիւթ ունի, նա մտապատճեների և գաղափարների չափազանց սակաւ պաշար ունի. Իսկ կերների և աղափարների չափազանց սակաւ պաշար ունի. Հասկերեանութիւնը մեզ ասում է, որ երեխան մինչև տարեկան հասակը, մինչեւ իսկ կեանքը ոկրի հինգ տարիներում այնքան մտապատճեներ է ստանում, որքան նա չի ստանայ իր կեանքը մնացած ժամանակամիջոցում: Տարը տարեկան աշակերտն այնքան շատ մտապատճեներ և գաղափարներ ունի, որ եթէ նա կեանքը մնացած տարիներում գրէ միայն այն նիւթերի մասնին, որ ունի իր հոգու մէջ, առանց հարստացնելու ունեցածն աւելի նոր մտապատճեներով, կրտսեկանանան նրա ամբողջ կեանքը ընթացքում: *) Այդպիսով ուրեմն նա նիւթի կարիք չի պատճառ:

Բացի ասում են, որ աշակերտն այդ նիւթից օգտւել չի կարող. Այդ էլ սխալ է: Նա կարողանում է օգտւել նրանից, բայց միայն այնքան, որքան գտրգացած է նրա ժամանական գործունէութիւնը. Նրանում չկան ժամանական նիւթ եղող տարեկաների այն անթիւ փոխազարձ յարարերութիւնները, ինչպէս հասակա-

*) Ինարկէ, եթէ միաժամանակ նա կհարստանայ իր հոգու մէջ ունեցած մտածման նիւթ եղող տարեկաների փոխազարձ յարարերութիւններով:

ւարների մէջ բայց այնուամենայնիւ նրանում՝ կան փոխօնդարձ յարարերութիւններ, նա մտածում, նա արտայայսում է իր մըռարերը, եւ ինարկէ զպրացի գործն է մեծացնել այդ փոխադարձ յարարերութիւնը, զարդացնել աշակերտին, բայց այդ արդէն ընթիրցանաթիւն գործն է և ոչ զրութեան: Գրութեան ուսուցման ժամանակ մինք կարող ենք միայն հետամուռ լինել մի բանի. սովորեցնել աշակերտին գրաւոր ուրայայակերու իր հոգու մէջ ունեցած մաքերիւ Այդ պատճառով ահա գրաւոր աշխատանքների համար աշակերտին այնպիսի նիւթ պէտք է տալ, որից նա կարգանոյ օգտակար է այդպիսի նիւթ նա միշտ կունենայ: Ճշմարիտ է սկզբում մտածողական շրջանը ուսմանափակւած կլինի և նրա շարադրութիւնները խիստ զուրկ կլինեն սրամտութիւնից, խորիմաստ լինելուց, բայց, չնորդիւ ուսուցման և զիխաւորապէս ընթերցանաթիւն, նա կոկու զարգանալ, նրա մտածողական կործունէութիւնը կոկու ընդարձակւել, իսկ նրա հետ միասին կընդարձակւեն նաև նրա շարադրութիւնները:

Սպասում են, որ մաքերն ինքնուրոյն նկարագրելու ժամանակ աշակերտն անզօր է զլուխ րերելու զործի մեքենայական կողմը, իսկ կարդացածի նկարագրելը տալիս է նրան օրինակ այն բանի, որ հարկաւոր է նրան այդ կողմից նկարագրելուց՝ այն է, մտքերի յայտնի յաջորդականութիւն: Բայց ահսնենք արդիօք ձեռք թերւում է այդ:

Ենթալրներ, թէ մեղ սախոպել են զրել յօդւածի բովանդակութիւնը, կարդացին յօդւածը, մինք հասկացանք և սկսեցինք զրել յօդւածի բովանդակութիւնը: Միթէ մէկը կարող է հաւատացնել մեղ, որ ինքը, լսելով և սպատմելով յօդւածը, զոնէ չնշին ուշադրութիւն դարձրել է նկարագրութեան պլանի վրայ Յածախ մինք մինչի իսկ անզօր ենք օգտակար այն պլանից, որով զեկավարուել է նեղինակը: Եւ որպէսզի կարդալիս կամ լսելիս պարզաբանենք մեղ համար պլանը, հարկաւոր է նրա վրայ յատուկ ուշադրութիւն դարձնել: Կարդացածը նկարագրելիս, զրաւոր վերարտուգրելիս մինք ոչ մի պլանի մասին չենք մտածում, մինչի իսկ ևթէ որ մենք իւրացնենք էլ այդ պլանը, հէնց այն ժամանակ էլ նկարագրած կինսէինք կարդացածը միմիայն յիշովութեամբ, առանց այդ պլանով զեկավարելու, օգտակար այն զուգորդութիւններից, որոնց հիման վրայ կարդացածը ամփոփւեց, զետեղ ևց մեր հոգու մէջ, եւ ևթէ մինք, հասակաւորներս զիտակցարը չենք առաջնորդում այդ պլանով, առաւել ևս մանուկները նրան չեն նկատի, այնպէս որ կարդացածը նկարագրելով՝ այդ կողմը ընաւ ձեռք չի բերում:

Շարադրութեան ձեր աշակերտի համար չի կարող զժւարին լինել և ահա թէ ինչու. ենթադրենք թէ աշակերտը զրում է որեւէ պատմական կամ նկարագրական ընաւորութիւն ունեցող շարադրութիւն: Որքան էլ որ նա ցանկութիւն ունենայ, այնուամենաւ չի կարող գտաւորել իր նկարագրած փաստերը, երեսյթները, առարկաներն այլ կերպ, քան ըստ ժամանակակցութեան կամ տեղակցութեան, այսինքն ճիշտ այնպէս, ինչպէս և ընդունել է նրանց: Նա անզօր է փոփոխել այդ պլանը, քանի որ մեր բոլոր ըմբռանածները զասաւորուում, կարգաւորուում են մեր հոգու մէջ և կրկին առաջ է կոչում համաձայն խիստ որոշ օրէնքների: Այդ պատճառով շարադրելու ժամանակ աշակերտի մէջ պլանն ինքն իրեն է հանդիս գալիս:

Վերջապէս տուում են, կարգացածը նկարագրելիս աշակերտը փարժեռում է արտայայտել իր մտքերն օրինակելի լեզուվ, տեսնեաք, թէ ինչ տոտեման այդ բանը ճշմարիտ է: Երկու լեզու կայ, կինդանի, խօսակցական լեզու և զրական լեզու: Փրական լեզուն աշքի է բնկնում իր հարուստթեամբ, իսկ կինդանի, խօսակցական լեզուն իր գեղարեւոտականութեամբ և պատկերառութեամբ: Մենք յաճախ այս կամ այն զրամծքի մտածու տուում ենք, որքան կինդանի, որքան լաւ է զրամած: Ի՞նչ է նշանակում այդ, նշանակում է, որ զրամծքի լեզուն մտածուում է կինդանի, խօսակցական լեզուն: Առաւել մեծ զեղարքեանականութեամբ և պատկերաւութեամբ աշքի է ընկնում մանկական լիզուն: Մանուկը զրում է անմիջական կերպով, մանուկը մտածում է միայն ուսուցիկերուով և իր մտքերն արտայայտում է նոյնպէս միայն պատահեր կերպով, առարկայօրէն, նրա լեզուն ամրողջապէս բացկացած է մակղիբներից (ԹԱՐԱՏԵՐԱ), զարգւածքներից և այլարանութիւններից: Եւ այ կարդացել է մանկական այնպիսի շարադրութիւններ, որոնք զրւած են լինում ասանց ուսուցչի որին միջամտութեան և սահմանափակումների, զիտէ, թէ որքան զեղարքեանականութիւն կայ մանկական այդ ստեղծագործութիւնների մէջ:

Կոմո լ. Ն. Տօլստոյի այն նշանաւոր յօդւածը՝ «Ո՞վ մէմից պէտք է սովորի զրել զիւզացի մանուկները մեզանից, թէ մինք զիւզացի մանուկներից», ան սովոր պարզութեամբ ապացուցանում է մեղ այդ. «Ի՞նչ խիստ տարօրինակ էր թւում, — ասում է նա մի տեղ իր զրւածքի մէջ, — որ զիւզական կիսազրագէտ երեխան յանկարծ ցոյց տեեց գեղարեւոտակէտի մի այնպիսի զիտակցական ոյժ, որին իր զարդացման անհուն բարձրութեամբ հասնել չի կարող Գէօթէն»: Հնարաւորութիւն չունենալով առաջ ըն-

Ծօլուսայի այս յօդւածի վերին աստիճանի հետաքրքիր մարդկան կրտականանանք միայն եղակալցութիւնն արտայալուզ բառերով, «Հէնց որ ևս նրան (աշակերտին) լիակատար ազատութիւն շնորհեցի, գաղաքացի նրան սովորեցնելուց, նա զրեց մի այնպիսի բանաստեղծական գրւածք, որի նմանը չի եղել ուստաց գրականութեան մէջ»: Ուրեմն կարգացածը նկարագրելիս մենք նրան ինչպիսի լեզու պէտք է սովորեցնենք, քանի որ նրա լեզուն գեղաբեսատականութեան կողմից այնպիսի բարձրութեան վրայ է կանգնած: Գրութեան ժամանակ գրական լեզուի կանոնաւորութեան և պիտառուապէս հարստութեան վրայ, որ այնքան անհրաժեշտ է աշակերտի գարգացման համար, անհնարին է ուշագրութիւն դարձնել և սովորեցնել: Այդ արգէն ընթերցանութեան, կարգացածը պատմելու և զրուցատրութեան դասերի գործն է, որոնց ժամանակ աշակերտները հարստանալով գաղափարներով և մտապատկերներով, միենոյն ժամանակ հարստանում են նաև այդ միենոյն գաղափարներին կամ մտապատկերներին համապատասխան բառերով: Եւ այդ կերպ հարստանալը, իհարկէ, մէծ նշանակութիւն ունի, բայց այդ հնարաւոր է միայն ընթերցանութեանց կամ զրուցատրութեանց, բայց ոչ երբէք գրութեանց, ժամանակ:

Այսպիսով, ուրեմն, կարգացածի նկարազբութիւնը լիպի կողմէց ոչինչ չի առաջին աշակերտին:

Գուցէ ոմանց թւում է, որ այսպիսով իրը մենք հերքելով այն նշանակութիւնը, որ տրում է ներկայումս կարգացածի գրաւոր նկարագրութեան, չենք ընդունում առհասարակ գեղարվեստական ստեղծագործութեան օրինակների նշանակութիւնը: Այդպիսի ենթագրութիւնը միանդամայն սխալ է: Օրինակների, նմուշների նշանակութիւնը շատ մեծ է, օրինակները զարգացնում, կը թում են հոգին: Եւ մենք պարաւոր ենք օգտուել և օգտում ենք նրանից ընդարձակ չափերով ընթերց ցանութեան ժամանակ ականական է, հարստացնելով աշակերտի հոգին: Բայց աշակերտին մաքերը զրաւոր արտայայտելու եղանակը սովորեցնելիս, օրինակներին նմանացնելը չպէտք է դեկամարդ գեր խաղայ: Բոլորովին նոյնն է, ինչպէս և նկարչութեան մէջ, գեղարվեստական օրինակները հսկայական նշանակութիւն ունին, բայց այդ գեղարվեստական օրինակներին նմանեցնելը չի կարող նկարչութեան ուսուցման խելացի մեթոդ համարել:

ես իսկապէս չգիտիմ, թէ ինչ աստիճան պարզ կարողացայ արտայայտել շօշափածս ինդիբը փաստերով, ապացոյցներով՝ բայց քանի որ իմ ամրող ապացուցածն ուղիղ է, քանի որ աշա-

կերտներն իրապէս իրենց շարադրութիւնների համար ունեն թէ նիւթեր իրենց հոգու մէջ, թէ այդ նիւթերից օգտւելու կարողութիւն, հմտութիւն, թէ պլան նկարագրելու համար և թէ, վերջապէս, մանկական զեղարւեստական լեզու, հետեապէս և մենք հա- համարձակ կարող ենք աշակերտներին ուղղակի նկարագրել տալ իրենց մտքերը, այսինքն շարադրութիւն գրել տալ:

IV

Այժմ առաջ է գալիս ոչ պակաս կարևոր մի այլ հարց, թէ
ինչպէս՝ պէտք է կազմակերպել այդ վերև յիշւած վարժութիւննե-
րը, գործնականօրէն ի՞նչպէս պէտք է գլուխ բերել այդ մէթօդը:
Այս հարցին պատասխանելը ներկայումս, քանի որ այդ մէթօդը
մեզանում դեռ բոլորովին չէ կիրառել և չէ մշակվել *), իհար-
կէ, շատ դժւար է: Նրա մանրան լուծումը առաջ գալ կարող
է միայն այն ժամանակ, երբ մենք, գիտակցելով այդպիսի մէ-
թօդի ամբողջ կարեռութիւնը, սկսենք աշխատել նրա գործնա-
կան կիրառման վրայ: Ներկայումս յաջորդական կիրառման տե-
սութիւն կազմելը, առանց փորձով ստուգելու, կարծում ենք, ա-
ռանձին նշանակութիւն ունենալ չի կարող: **):

Սակայն ինսդրի կարեորութիւնն ի նկատի ունենալով, մենք
առաջ ենք բերում Տրօեանովսկու անձամբ և մի քանի մանկա-
վարժների կատարած փորձերը և նրանց հետեանքներու:

«Մի ժամանակ ես տարրական դպրոցում ուսուցիչ էի, — զբում է Տրօեանովսկին, —և վերև յիշւած մէթօղը մի ամբողջ տա-

*) Թէպէտև, ինչպէս երևում է, Ե. Եանժուլի «Ամերիկական դպրոցը» գրքից, այդ մէթօդը վաղուց է, ինչ զործադրում է ամերիկական դպրոցներում, սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ այդ գրքում առաջ չի բերւած, չի նկարագրւած աշխատանքների յաջորդական բնթացքի նախագիծը:

**) Ծշմարիտ է, փերջին չորս տարւայ ընթացքում այս մեծագը արդէն բաւական մեծ ընդունելութիւն գտաւ, բաւական ընդարձակ չափիրով գործադրւեց: Առևսաստանում կան միքանի դպրոցներ, որտեղ այդ գործադրւում է այս կամ այն ձևով: Գործադրւում է մեծաւ մասամբ այսպիսի յաջորդականութեամբ. նախ կարգացած պատմական թէմաների և պատմածքների վրայ բանաւոր շարադրութիւններ է տրւում, ապա միենոյն թէմաների վրայ գրաւոր. այնունեան զրել են տալիս քեֆական կեանքի դէպքերի նկարագրութիւններ, զանազան տեսակի նամակներ պատկերներսվ շարադրութիւն և վերջապէս պատմական և նկարագրական բնաւորութիւն ունեցող թէմաների վրայ ինքնուրոյն շարադրութիւններ:

ըի գործադրեցի: Դպրոցն ունէր երեք բաժանմունք: Այսպիսի գրաւորներով ես սկսեցի պարապել նոյեմբերի կէսերից միայն բարձր բաժանմունքի աշակերտների հետ: Այդ պարապմունքները տևեցին չորս ամիս: Որովհետև այդ պարապմունքները պարտադիր չէին, այդ պատճառով իմիջի այլոց էին տեղի ունենում, շաբաթական մի կամ երեխն երկու անգամ:

«Այդ պարապմունքների գրգապատճառ եղել է «Միք Եօյի» ամսաթերթի 1897 թ. նոյեմբերի գրքոյկը, որտեղ զետեղւած է եղել տիկ. Դմիտրիեվայիայի «Շկոլյար» գրւածքը, որ բաղկացած է տեսարաններից և խարակտերիստիկաններից և գրւած է խիստ կենդանի լեզով: Ես այդ գրւածքը կարդացի աշակերտներին: Նրանում առաջ են բերւած մի շարք նամակներ, որ գրել են աշակերտները ուսուցչունու պատէրով. աշակերտները երեակայելով իրենց այն, ինչ որ կցանկային լինել, նկարագրում են իրենց այդ նոր կենցաղը ծնողներին ուղղած նամակների մէջ: Այդ նամակներն այն աստիճան դիւր եկան աշակերտներին, որ նրանք ցանկութիւն յայտնեցին ինձ, թէ մենք ես կուգենք գրել այդպիսի նամակներ: Այդ գէպքում ես խուրհուրդ տւի գրել նախ այնպիսի նամակներ առից հեռացած հօրը կամ եղբօրը, որոնց մէջ նկարագրւած լինին տնային գործերը:

«Աշակերտներն անմիջապէս գրեցին: Աշխատանքը կատարւած էր մեծ սխալներով, անկանոն և անյարմար կերպով. երեսում էր, որ նրանց համար միանգամմից տնային գործերի վերաբերեալ այդպիսի նկարագրութիւնը դժւար էր, թէպէտե, այնուամենայնիւ միքանիսը կարողացան բաւական գոհացուցիչ աշխատութիւն ներկայացնել»: Այդ բոլոր նամակները ուսուցիչը ուղղում էր աշակերտների հետ միասին. իւրաքանչիւր աշակերտ կարգում էր իր նամակը, իսկ միւսները լառմ էին և ապա, նկատելով սխալները, անհարթութիւնները, միասին ուղղում էին: Ամերողն ուղղելուց յետոյ իւրաքանչիւրը կարգում էր կրկին իր գրածը, որից յետոյ արդէն շարագրութիւնները միանգամմայն գոհացուցիչ էին: Այնուհետև Տրօեանովսկին գրել է տալիս երկրորդ նամակը՝ ուղղած տան հասցէով զպրոցի մասին: Այս անգամ աշխատանքն աւելի լաւ էր գուրս եկել: Նկատելի էր, որ մեծ ազգեցութիւն էին թողել այդ աշխատութեան վրայ ուղղած առաջին նամակները, որոնք նրանց համար օրինակ են ծառայել: Որ նրանց մանկական աշխատանքները իրենց համար ամենալաւ օրինակներն են հանդիսանում գործի մեխանիզմի իւրացման համար, այդ երեսում է հետեւալ փաստից. երբ Տրօեանովսկին առաջարկել է աշակերտներին տուն նամակ գրել, նրանք խնդրել են ուսուցչին մի անգամ

և կարդալ տիկ. Դմիտրիեվայիայի «Շկոլյար» հրատարակութեան միջի նամակները, ասելով, որ այնաեղ խիստ շատ նասկանալի է գրւած: Եւ մենք կարծում ենք, որ միայն լաւ գրւած այդպիսի մանկական գրւածքները կարող են երեխանների համար ծառայել միանգամմայն հասկանալի օրինակներ, իսկ դասագրքերի յօդւածները մեծաւ մասսամբ գրւած են մանուկների համար օտար լեզով: Մանկական լեզով գրւած մանկական գրւածքները նրանց համար ոչ միայն կատարելապէս հասկանալի են, այլև կարծես նրանց սեփականը, հարազատը լինեն, և նրանք արագ կերպով սովորում են, ընդորինակում այն բոլորը, ինչ որ հարկաւոր է շաբաթգրութեան համար:

Այս կերպ աշակերտները գրել են հինգ վեց նամակ: Ուսուցիչը տեսնելով նրանց այդպիսի հետաքրքրութիւնը շաբաթութիւն գրելու նկատմամբ, կարդացել է նրանց համար «ЯСНО-ПОЛЯНСКАЯ ШКОЛА»-ի աշակերտական շաբաթգրութիւններից: Ընթերցումից յետոյ բոլորը յայտնել են, որ այլև չեն կամենում նամակներ գրել, այլ կընկարագրեն «զանազան դէպքեր»: Այնունետև աշակերտներն սկսել են գէպքեր նկարագրել: Եւ ինչ, բանից երեւաց, որ «գէպքեր» նկարագրելը աշակերտների համար աւելի դիւրին է եղել, և այդ պատճառով պատմական շաբաթգրութիւններն արագ քայլերով սկսեցին առաջ գնալ: Եւ այդ այդպէս էլ պէտք է լինէր: Աշակերտն աւելի դիւրութեամբ կիւրացնէ այն մտապատկերները, որոնք մտնում են նրա գիտակցութեան մէջ ըստ ժամանակակցութեան օրէնքի, քան ըստ տարածութեան սահմանակցութեան օրէնքի: Առաջին գէպքում նա պատկերացնում է դիւրածն այն կարգով, ինչ կարգով որ տեղի է ունեցել: Նկարագրութեան ժամանակ աշակերտի համար կարգ պահպաննելը դժւար է, և նա երբէք չի կարող գտնել այն:

Ահա այդ պատճառով սկսած մական ընաւորութիւն կրող շարադրութիւնն զրելը, իբրև աւելի հեշտը, նկարագրական շաբաթութիւնից առաջ պէտք է տեղի ունենայ: *)

*) Միւնոյն կերպ վարւել է նաև Տօլստոյը. «Առաջին թէմաները, —ասում է նա, —որ ամենաբնական ձանապարհով մեր գլխում ծնունդ առան, հասարակ, պարզ առարկաների, այսինքն հացահատիկների, խրճիթի, ծառերի և այլոց շուրջն էին պտըտում. սակայն, որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ նկատեց, որ այդ պահանջներն աշակերտներին համարեա թէ լացի գուռը հասցրին, և, չընայած ուսուցչի օգնութեան, նրանք բացարձակ կերպով հրաժարւեցին գրել այդպիսի թէմաների մասին: Մենք փորձեցինք առաջարկել որևէ գէպք նկարագրել, բոլորն էլ ուրախա-

Տարւայ վերջը աշակերտների շարադրութիւններն արդէն միանգամայն գոհացուցիչ էին: Դործի մեքենայական կողմը նրանց համար այլ ևս գժւարին չէր թւում, ամեն ինչ դուրս էր գալիս կողիկ և կանոնաւոր:

Այսուհետև Տրօեանովսկին առաջ է բերում իր աշակերտների վերջին շարադրութիւնը, որ գրել են ուսումնական տարւայ վերջը: Նրանց առաջարկւած էր, որ ամեն մէկը զրէ, թէ ինքն ինչպէս է ուսում առել, կարդալ-գրել սովորել: Կարեռ ենք համարում առաջ բերել թարգմանաբար այս շարադրութիւններից միքանիսը, որովհետև թէման խիստ դիւր էր եկել աշակերտներին:

Չորս տարի սովորող մի հիւանդուտ, բայց ընդունակ և վերին աստիճանի տպաւորւող մի տասնըշորս տարեկան երեխայ գըրում է.

«Ես սովորում եմ գիւղական դպրոցում: Երբ ինձ առաջին անգամ ուսումնարան տարան, ես երկար նայում էի աշակերտների, ուսուցիչների, դասարանների, նրանցում եղած առարկաների վրայ և նայելով չէի կշտանում, որովհետև ուսումնարանն ինձ շատ դիւր եկաւ: Հետեւեալ օրը հայրիկս ինձ հարցրեց. «Հը», ինչ է, լաւ է ուսումնարանը»: «Ո՞հ, շատ լաւ է, —պատասխանեցի ես, —այնքան լաւ, որ նայելուց չեմ կշտանում: Հէնց որ ներս մտանք, չէի իմանում, թէ որտեղ եմ ես, եկեղեցում, թէ դպրոցում»: Երկու շարաթ ես շարունակ գնացի-եկայ և սովորեցի լաւ կարդալ: Երբորդ շարաթւայ երկուշարթի օրը մենք հարեան գիւղի աշակերտներին ծեծեցինք: Այդ ժամանակ մեր վարժուհին՝ Ալեքսանդրա Անդրէեմսան շատ բարկացաւ մեզ վրայ: բոլորիս էլ դրա համար չոքացրեց:

«Դեկտեմբերի 20-ին վառարանի հոտից գլուխս սաստիկ սկսեց ցաւել, սիրտս վեր ածեցի: Հետեւեալ տարին ես ինձ ու ինձ էի արդէն դպրոց գնում և առաւտաներն էլ շատ վաղ: Մինչև փետրվարի 6-ը ոչ մի զաս բաց չթողի: Փետրւարի 7-ին հիւանդացայ և երեք շարաթ հիւանդ պառկեցի և մոռացայ կարդալը: Յետոյ ես առողջացայ և սկսեցի դպրոց գնալ: Ինձ շրջապատեցին, կարդալ տիխն, բայց չէի կարողանում կարդալ: Վարժուհիս ինձ առաջարկեց կարդալ «Վոլոдинի պուրուշ» յօւածը: Ես հաղիւ հազ կա-

ցան, կարծես որեէ բան նւէր ստացան: Դպրոցներում այնքան սիրւած, այսպէս անւանւած պարզ առարկաների նկարագրութիւնը, ինչպիսին էին, օրինակ, խոզը, կճուճը, սեղանը՝ առաւել դժւարին թւաց, քան ամբողջ, յիշողութիւնից վերցւած պատմւածքները: («ՅԱՌՈ-ՊՈԼՅԱՆՍԿԱՅԱ ՌԱԿՈՆԱԿԱՐԱՆ»-ի նոյեմբերի և դեկտեմբերի հա-

րողացայ կարդալ, աշակերտները ծիծաղում էին ինձ վրայ, որ ես վատ եմ կարդում: Մի շաբաթից յետոյ ես այնքան առաջ գնացի, որ միւսներից լաւ էի կարդում: Երբորդ տարին էլ ես դպրոց գնացի: մեզ մօտ եկաւ մի նոր ուսուցիչ, սա լաւ էր պարապում մեզ հետ: Նրա ժամանակ քննութիւն չեղաւ, որովհետև, երբ որ նա եկաւ, աշակերտներն աղօթք ասել էլ չին իմանում: Երկու հոգով, ես և մէկ ուրիշ աշակերտ նստել էինք աւագ խըմբի մէջ: Ես քննութիւն տալ չէի կարող, որովհետև փոքր էի, գեռ հազիւ տասը տարեկան լինէի, իսկ մենակ միւս ընկերոջն համար տեսուչ չէր վայ: Չորրորդ տարին ես կրկին դպրոց գնացի: այժմ էլ սովորում եմ և այս տարի ուսումնական կաւարտեմ»:

Առաջ ենք բերում երեք տարի ուսած տասնեմէկ տարեկան մի այլ աշակերտի գրածը. սա գիւղացի երեխաների հետ համեմատած աւելի գարգացած էր:

«Ես ուսումնարան եմ մտել 1895 թ. հոկտեմբերի 2-ին: Ես ինքս ուղղում էի, որ հայրիկս ինձ դպրոց տայ: Առաջին անգամ ես հօրս և եղրօրս հետ դպրոց գնացի: առաւօտ էր, գեռ աշակերտները դպրոց չէին եկել: Դասարաններն ինձ շատ դիւր եկան, որովհետև սեղանները կարգով շարւած էին: Մենք շատ սպասեցինք վարժուհուն: Նա ուշ եկաւ: Ներս մտնելուն պէս հայրիկիս հարցրեց: «Սա մի տեղ սովորել է»: Հայրիկս պատասխանեց. «Ոչ»: Յետոյ վարժուհին մեզ նստացրեց և սկսեց ցոյց տալ տառերը: Ես շուտով ճանաչեցի տառերը և սկսեցի կարդալ: Վարժուհուս ես շատ էի սիրում: Շուտով ես հիւանդացայ և ութ օրից յետոյ միայն նորից ուսումնարան գնացի: Շուտով ես էլի զրկեցի ուսումնից: Եղբայրս սկարլատինով հիւանդացաւ և ֆեղչէրն ինձ չէր թոյլ տալիս ուսումնարան գնալ: Մի քանի օրից յետոյ եղբայրս մեռաւ: Ես մենակ մնացի, էլ ինձ չթողին ուսումնարան, այդպէս էլ մնացի այդ տարի: Միւս տարի ինձ նորից ուսումնարան տարան, այս անգամ ուսումնարանն ինձ լաւ չերկաց. Եկաւ վարժուհիս, մեզ կարդալ տեսց և յետոյ էլ պատմել տեսց: Այդ տարի ես էլ երկար չովորեցի, որովհետև վարժուհիս հեռացաւ մեղանից, գնաց ուրիշ քաղաք: Շատ ժամանակ մենք մնացինք առանց դասի: Միքանի ժամանակից յետոյ իմացանք, որ նոր վարժապետ է գալիս. մենք հաւաքւեցինք ուսումնարան: այդ օրը շատ սպասեցինք նրան և վերջը ուղեցանք ցրւել, յանկարծ տեսանք, գալիս է: Մենք վագեցինք դասարան և տեղերս նստեցինք: Վարժապետը ներս մտաւ և թուարանութեան զաս պարապեց: Ուսուցիչը մեզ դուր եկաւ: Լաւ էր զաս տարիս: Մենք շուտով սովորեցինք գրել, կարդալ և ինդիբերը լուծել»:

Այստեղ կարեոր ենք համարում առաջ բերել մի փորձ, որ կատարել է մի ուսուցիչ իր զաւակի վերաբերմամբ այդ գաղափարը գործնականորէն գործադրելու համար:

Հնդունելով, որ դպրոցներում գրաւորները խիստ թերի են, հայրը որոշում է լրացնել օգնութեան համել: Սակայն իր պարագմունքներին նա տալիս է հետեւալ ընթացքը: Նախ վարժեցնում է զրուցատրութեան, բանաւոր շարադրութեան (СОЧИНИТЕЛЬСТВУ), որ իր նպատակներով ոչնչով չէ տարբերում գրաւոր շարադրութիւնից, առաւել հեշտ է վերջինից և միենոյն ժամանակ իր մէջ պարփակում է հոգեկան գործունէութեան այն բոլոր տարբերը, որոնք, իբրև գլխաւոր մասեր, մտնում են նաև մտքերի գրաւոր նկարագրութեան արտայայտութեան մէջ: Ահա այդ պատճառով հետեւով ընդհանուր դիդակտիքական կանոնին՝ անցնել աւելի պարզից և հեշտից համեմատաբար աւելի բարդին և դժւարին, աւելի յարմար է սկսել ոչ թէ ուղղակի գրաւոր շարագրութիւններից, այլ նախ բանաւորներից: Եւ միայն այն ժամանակ, երբ աշակերտը ձեռք կը բերէ իր մտքերը և տպաւորութիւնները քիչ թէ շատ կապակցած կերպով բանաւոր հաղորդելու հմտութիւն, պէտք է անցնել դրանց գրաւոր արտայայտելուն:

Այս պատճառով ուսուցման առաջին տարում յիշեալ ուսուցիչը վճռեց նախ և առաջ իր որդուն բանաւոր շարադրութեան վարժեցնել: Այդ բանը նա արեց հետեւալ կերպով. իւր որդուն տալիս էր մի օրով մի պատմւածք՝ կարդալու համար: Այդ պատմւածքը նրանք կարդում էին միայն և վերլուծում. աշակերտը պատմում էր կարդացածը և դուրս բերում գլխաւոր միտքը: Այնունեաւ հայրը հարկադրում էր նրան կազմել այդ թէմայի մասին իր պատմւածքը: Պատմւածքները կազմում էին սկզբում կարդացածի օրինակով և պլանով, վերջը, երբ պատմելու բաւական վարժութիւն, ձեռք բերեց, արդէն մանուկը կազմում էր կարդացածի պլանից և բովանդակութիւնից բոլորովին անկախ, միայն թէ պատմւածքի մէջ լինի միենոյն գաղափարը: Այդպիսի վարժութիւններով հայր և որդի զրադել են համարեա մի ամրող տարի: Տարւայ վերջը նրանք բանաւոր պատմւածքներից անցան այդ նոյն պատմւածքների գրաւոր արտայայտութեան նկարագրութեան:

Եւ ինչ բանաւոր վարժութիւններից յետոյ գրաւորներն աշակերտի համար այլ ևս ոչ մի դժւարութիւն չէին ներկայացնում. աշակերտն աղատ կարողանում էր կտտարել տւած աշխատութիւնը: Ճշմարիտ է, ուղղագրութիւնը սաստիկ տուժում էր, բայց այդ դժբախտութիւնը միանգամայն ուղղելի դառնաւ: Ամեն ան-

գամ հայրը ուղղում էր նրա հետ միասին գրածը և միշտ ցոյց էր տալիս սխալները և ապա ստիպում արտագրել ուղղածը: Այսպէս շարունակեցին պարապել հայր և որդի նաև երկրորդ տարւայ սկզբին: Աշխատանքները մանկանը խիստ հաճելի էին թւում: Յետոյ հայրը ցոյց տւեց նրան, թէ ինչպէս պէտք է յիշատակարան պահել. մի փոքրիկ տետր յանձնեց որդուն և պատմերեց նշանակել նրա մէջ այն ամենը, ինչ որ կը ցանկանայ ինքը երեխան—իր պատմածքները, իր տպաւորութիւնները, զանազան դէպքերը և այլն: Այդ յուշատետրի մէջ այս կամ այն կերպ գրելու համար ոչ մի պատէր չէր արւած. մանուկը կարող էր գրել, երբ ինքը կամենար և ինչ որ կամենար: Երբեմն միայն այդ յուշատետրը հայրն աչքի էր անցկացնում և ուղղում: Մանուկը գրում էր համարեա ամենայն օր: Նիւթը խիստ բազմազան էր: Եւ ահա իր մանկական մտքերի նկարագրութեան այսպիսի վարժութիւնները երկու տարւայ ընթացքում այնպիսի արդիւնքներ տւեց, որպիսին հազիւ կարելի լինէր սպասել որեէ միջնակարգ դպրոցի աշակերտից:

Այս բոլորից յետոյ արդէն այդ միջակ ընդունակութեան տէր երեխան բոլորովին ազատ կարողանում էր արտայայտել իր մանկական մտքերը:

Ափսոս, որ ժամանակը չի ներում առաջ բերել այստեղ այդ մանկան գրած օրագրութիւններից միքանիւր: Սակայն մենք, որ բախտ ենք ունեցել կարդալու, այժմ խոստովանում ենք, որ այդ գրւածքները ոչ միայն հետաքրքիր են, իբրև տասը տարեկան երեխայի մտքերի արտայայտութեան նմուշներ, որ ձեռք են բերւած իր սեփական մտքերը նկարագրելու մէջ վարժեցնելու միջոցով, այլև իրենց բովանդակութեամբ մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում: Այդ գրւածքները մեզ տալիս են մանկան, նրա ընդունակութիւնների, նրա հետաքրքրութիւնների, զիտողութիւնների մի գեղեցիկ խարսկականութիւնների: Մի երկու տասնեակ այդպիսի ինքնուրոյն գրւածքով մարդ աւելի լաւ կճանաչէ աշակերտն, քան այլ պայմաններում երկու, երեք տարւայ ընթացքում:

Մեր համեստ կարծիքն է, որ խիստ օգտակար կլինի եթէ մեր դպրոցների աշակերտներն ևս պահեն այդպիսի մի-մի յուշատետր և նրանց մէջ արձանագրեն իրենց կեանքում պատահած զանգան դիտածներ, կարդացած գրքերի բովանդակութիւնները, իւրենց անձնական տպաւորութիւնները, զիտողութիւնները, մտքերը, միայն թէ ուսուցիչն այդ բոլորը, թէկուզ շարաթը մի անգամ, պէտք է աչքի անցկացնէ և ուղղէ, որը, բացի նրանից, որ կարող է ծառայել իրենց մտքերը նկարագրելու համար իրեն զի-

դեցիկ վարժութիւն, միմնոյն ժամանակ հնարաւորութիւն կըտայ ուսուցչին աւելի մօտից ծանօթանալու աշակերտի հոգեկան աշխարհի և դէպի ընթերցանութիւնն ունեցած սիրոյ հարցապընդումների և հետաքրքրութիւնների հետ և այլն:

Այժմ մենք կանգ կառնենք քիչ աւելի մանրամասն յիշեալ եղանակի, այսինքն կարդացած պատմւածքների թէմաների մասին նախ բանաւոր և ապա զրաւոր շարադրութիւններ գրելու պարագմունքների եղանակի վրայ: Հիմք ընդունելով բնական անցումը՝ հեշտից դէպի դժւարը, այդ եղանակն ունի նաև այն նշանակութիւնը, որ շարադրութեան համար նիւթը ընտրելիս աշակերտը դրւած չի լինի որևէ շրջանակի մէջ: Նրան վերապահում է ինքնազորունկութեան լիակատար ազատութիւն, նա կարող է կարգադրութիւն, տնօրինութիւն անել իր ամրող մտաւոր պաշարի վերաբերմամբ: Իսկ այդ բանը փոքր աշակերտի համար խիստ կարևոր նշանակութիւն ունի: Ի՞նչու աշակերտը չի կարողանում գրել երեմն ուսուցչի տած մինչև իսկ յարմարաւոր թէմայի մասին նոյն իսկ երկու երեք տող: Շատ պարզ է, որովհետեւ ուսուցիչը իր որոշ, խիստ սահմանափակ թէմայով նրան դընում է այնպիսի պայմանների մէջ, որ անկարող կըլինի գտնել նրա համար յարմարաւոր նիւթ: Եւ եթէ հասակաւոր, բարձր զասարանի աշակերտին թէմայի խիստ որոշ շրջանակները՝ դիսցիպլինայի կարգ ու կանոնի ենթարկելով նրա միտքը՝ ստիպում են վերլուծել նրա հոգու մէջ ունեցած նիւթը, այն դէպքում այդ անելու անկարող փոքրահասակ աշակերտին նրանք կդնեն աշխատանքի համար միայն անհնարին պայմանների մէջ: Հէնց այդ պատճառով փոքր աշակերտի համար այդպիսի թէմաների մասին աշխատանքներ տալը և՛ դժւար է, և՛ անհաճելի. այն ինչ նրանց ազատութիւն տւող թէմաների մասին նրանք կգրեն թէ հեշտութեամբ և թէ սիրով:

Բացի դրանից, կարդացած պատմւածքների թէմայի մասին ինչպէս բանաւոր, նոյնպէս և գրաւոր վարժութիւնները մի նշանակութիւն ևս ունեն: Մեր բոլոր, ինչպէս տարրական, նոյնպէս և միջնակարգ դպրոցները, չգիտենք ինչո՞ւ, բոլորովին անտես են անում աշակերտի մէջ ստեղծագործական կամ ակտիւ երևակայութեան զարգացումը: Դժւար է գտնել մեր դպրոցներում թէկուղ մի վարժութիւն, որ հետամուտ լինի այդ ընդունակութեան դարգացման: Մինչև իսկ կարենու ենք համարում ասել, որ դեռ շատ չի անցել այն ժամանակից, մանաւանդ մեզանում, երբ այդ ընդունակութեան զարգացման վրայ նայում էին, իրեն ոչ միայն օգտակար, այլ մինչև իսկ հոգու վասակար մի ընդունակութեան,

և եթէ թէ տան և թէ դպրոցի դաստիարակութիւնը վերաբերում էր երևակայութեանը, շօշափում էր մանկան հոգու այդ կողմը, այդ կատարում էր մի որոշ նպատակով՝ ճնշել նրա գործունէութիւնը:

Համաձայնելով, իհարկէ, այն բանի հետ, որ կրաւրական (ակամայ, անգիտակցական), չափազանց զարգացած երևակայութիւնը յաճախ ինչպէս բարոյական վտանգներ է առաջացնում, նոյնպէս և մտաւոր (զգացմունքի գերիշխումը երևակայութեան վրայ և այդ պատճառով «ճշմարտութիւնը հանգիստ կերպով հետամտելու անընդունակութիւն» (Սելլի), — չի կարելի սակայն համաձայնել այն բանի հետ, որ ակտիւ, ստեղծագործական երևակայութիւնը, որին կառավարում է մեր կամքը, կարող է որևէ կողմից աշակերտի համար վասակար լինել և ուրեմն պէտք է ձնչել կրթութեամբ: «Ուժեղ, ուժգին և պայծառ երևակայութիւնը, — ասում է Ուշինակին, — որի հետ մարդու հոգին կռւել չի կարող, ստեղծում է անմիտներ. սակայն միենոյն երևակայութիւնը, որ հնազանդ է մարդու կամքին, ստեղծում է ոչ միայն մեծ բանաստեղծներ, այլ և մեծ մտածողներ և գիտնականներ»:

Մարդու հոգու այդ կարենոր ընդունակութեան հէնց զարգացման համար ծառայել կարող է կարդացած պատմւածքների թէմաների մասին շարադրութիւններ գրելը, հնարաւորութիւն տալով աշակերտին, որ կամքի մասնակցութեամբ հոգու մէջ ունեցած նիւթերից կազմել նոր որոշ կօմքինացիաներ (մտակարգութիւններ):

Այսպիսի վարժութիւններ բանաւոր շարադասութեան մէջ գործադրել է նաև Տրօեանովսկին երկու տարի շարունակ: Նա իր աշակերտներին պատմւածքը կարդացնել էր տալիս զասարանում, վերլուծում այն, պատմում, գուրս էր բերում զլիսաւոր միտքը: Յետոյ նա ստիպում էր աշակերտներին կազմել իր պատմւածքը հէնց նոյն թէմայի մասին: Սկզբներում, երբ այդ վարժութիւնը նրանց համար գեռ նոր էր, նրանք քիչ դժւարանում էին: Այդ պատճառով սովորաբար սկզբներում ուսուցիչն ինքն էր նրանց պատմւածքներին օրինակ տալիս կամ նրանց օգնում կազմելու իրենց պատմւածքները: Շատերը շատ շուտով զլիսի էին ընկնում, թէ բանն ինչումն է և այլեւ ոչ մի օգնութեան կարիք չէին զգում: Թասարանական միացեալ ուսուցումը օգնում էր աւելի թոյլ երեխաներին, լսելով միւսների պատմւածքները, սովորելու առհասարակ պատմւածքներ կազմել:

Սկզբներում այդ պատմւածքները սովորաբար լինում էին կարդացածներին շատ նման, փոփոխուում էին միայն գործող ան-

ձինք, բայց յետոյ վարժութիւն ձեռք բերելով, պատմւածքները քանի գնում աւելի և աւելի ինքնուրոյն բնաւորութիւն էին ստանում և բնաւ կախումն չէին ունենում կարգացածի պլանից և մինչև իսկ բովանդակութիւնից. պահպանում էին իրենց մէջ միայն միենոյն գաղափարը. Այդ պատմւածքների համար աշակերտները նիւթ էին վերցնում մեծաւ մասսամբ իրենց մանկական կամ իրենց շրջապատող կեանքից: Երբեմն էլ նրանք օգտառում էին ընթերցանութիւնից ստացած նիւթից, ձեսփոխելով, յարմարեցնելով այնպէս, ինչպէս իրենց հարկաւոր է, կամ թէ չէ, եթէ որ իրենց մի ժամանակ կարգացած պատմւածքը իր գաղափարով յարմարում է պահանջածին, առաջ էին բերում այն ամբողջապէս, առանց փոփոխելու: Այդ պատմւածքների առանձնայատկութիւնը նրանց իրական գոյութիւնն է: Ֆանտաստիքական պատմւածքը, իր ճիմքում չունենալով իրականութիւն, ամեն ժամանակ անխնայ կերպով քննադատում է աշակերտների կողմից. «Այս լաւ չէ, աս ճիշտ չէ», լաւում է ամեն կողմից այդպիսի պատմւածքից յետոյ:

Զափի և իրականութեան զգացմունքը, ճշմարիտ որ, իր մանկական զօրութեամբ զարգացած է նրանցում շատ ուժեղ կերպով. աշակերտներն այդ պարապմունքները շատ են սիրում, և, եթէ սկզբներում շատ ցանկացողներ չեն լինում, միքանի ամսից յետոյ արդէն թիւն այնքան է շատանում, որ ուսուցիչը ստիպւած է լինում հերթ նշանակել ցանկացողների համար:

Այդպիսի բանաւոր շարադրութիւններից յետոյ արդէն հեշտութեամբ կարելի է անցնել կարգացած պատմւածքների միենոյն թէմաների նաև գրաւորներին, որովհետև նրանք այժմ աշակերտների համար ոչինչ այնպիսի առանձին բան չեն ներկայացնում, և նրանց համար գժւար չէ արդէն գրի առնելը: Այդ կերպ է վարել նաև Տրօեանովսկին վերջը:

Նոյնպիսի աշխատանքների կարգին է պատկանում նաև պատկելներով շարադրութիւնն զրելը, որ նոյնպէս զարգացնում է աշակերտների մէջ ստեղծագործական երևակայութիւնը և միենոյն ժամանակ հնարաւորութիւն է տալիս ազատ օգտաելու ունեցած նիւթերից: Այդ վարժութիւնները կարելի է կատարել միայն աւելի բարձր դասարանի, օրինակ ուսուցման երրորդ տարւայ, աշակերտների հետ. ոմանք մատնանշում են դէպքեր, երբ այդպիսի վարժութիւններ գործադրւել են տարրական դպրոցի ուսման նաև երկրորդ տարում, և անյաջող էլ չի անցել: Այս վերջին տեսակի աշխատանքը, այն է՝ պատկերներով շարադրութիւնն զրելը, այսպէս է տեղի ունենում. ուսուցիչը դասարան է բերում որևէ պատկեր, գլխաւորապէս ժամբային բովանդակութիւն ունեցող

(արդանկար), կախում է աշակերտների առաջ զբառախտակի վրայից և վերլուծում նկարը աշակերտների հետ միասին: Ենթադրենք թէ պատկերն իրենից ներկայացնում է անտառից սայլով փայտ կրող մի գիւղացի: Մի շաբթ հարցերի միջոցով կպարզէի, թէ ինչ է արտայայտւած այդ նկարով. «Ով է գնացողը», «որտեղից է գընում», «ուր է գնում» և այլն: Սրանով էլ վերջանում է ուսուցչի աշխատանքը: Այսուհետեւ աշակերտներն այլևս իրենք չեն նկարագրում պատկերը, այլ նրա վրայ նայելով կազմում են, մի պատմւածք, որի համար պատկերը ծառայում է կամ իրեւ սիւժէտ պատմւածքի, կամ սկզբնակէտ: Եւ ահա այստեղ սկսում է աշակերտների աշխատանքը: Մէկը գրում է, թէ ինչպէս գիւղացին գնացել է անտառ, փայտ կարել. ինչպէս վերադարձել է տուն, ինչպէս կինը և երեխաները ուրախացել են, երբ փայտը տեսել են, որովհետեւ վերջապէս վառարանը կվառւի և սենհեակը կտաքանայ և այլն: Մէկ ուրիշը գրում է, որ գիւղացու մէկ հատիկ կովը սատկել է, նրա մանր երեխաները մնացել են առանց կաթի, և ահա գիւղացին ստիպւած ձմեռը փայտ է կտրում և բերում անտառից քաղաք ծախսելու, որպէս զի ձեռք բերած փողով գարնալը կով գնէ և այլն: Երրորդը գրում է, որ մի վաճառական վարձել է գիւղացուն, որ վերջինս իրեն համար անտառից փայտ բերէ: Այդ գիւղացու ընտանիքը մեծ է. անցեալ տարւայ բերքը քիչ է եղել ևր ընտանիքը կերակրելու ձմբան պաշար չունի և որպէսզի հացի համար փող հասցնէ, փայտ է կրում և այլն *):

Ստացւում են զանազան տեսակի պատմւածքներ, և աշակերտները կատարում են առանձին սիրով, հեշտ և ազատ կերպով: Ոչ նիւթը, ոչ թէման նրանց չեն նեղում, և նրանցից իրաքանչիւն աշխատում է ինքնուրոյն: Այդ վարժութիւնները նոյնպէս պէտք է սկսել բանաւոր շարադրութիւնից և յետոյ արդէն անցնել գրաւորներին:

Այդ շարադրութիւնների համար ընտրւած նկարները պէտք է լինեն պարզ, բայց բովանդակալից, որոնք աշակերտի հոգու մէջ առաջ բերելով ստեղծագործութեան համար առատ նիւթ, չցրեն նրա ուշադրութիւնը: Այդպիսի պատկերներ միշտ կարելի է գտնել պատկերազարդ հանդէսներում: Ճշմարիտ է, նրանք ծաւալով փոքր կլինեն, սակայն ինկատի ունենալով, որ դրանց մէջ շատ կարելի է գտնել յարմարաւոր բովանդակութիւն ունե-

*) Այս պատմւածքների բովանդակութիւնը վերցւած է աշակերտական տեսրերից:

ցող նկարներ, այդ պատճառով պէտք է հաշտել ծաւալի փոքրութեան հետ:

Վերջերս պատկերներով շարադրութիւն գրելու գաղափարը բաւական յամառ կերպով թափանցում է դպրոցական կեանքի մէջ: Արդէն լոյս տեսած կան այդ նպատակով գործադրելու համար յարմարագոյն ոռուսական դասագրքեր: այդպիսիներից է «ՀԻԿՈԵ СЛОВО» չ. I-я Ա. Օստրօվսկու, որ նշանակւած է միջնակարգ դպրոցների առաջին դասարանի համար, կամ «Первая ступень въ литературу» Եշտակօվի և Տուլուպօվի. սրանց մէջ զետեղւած են առանձին նկարներ, որոնց տակ գրւած են. «Рассказать или написать, что здесь нарисовано»: Լոյս են տեսել նաև յատուկ նկարներ շարադրութիւնների համար թէպէտ դրանք իրենց բովանդակութեամբ սակաւ յաջողւած են: Այդ պատկերների մէջ նկարագրւած են որևէ դէպքի կամ պատմւածքի առանձին մօմէնտներ, և նկարագրելով այն, ինչ որ նկարւած են այդ պատկերների վրայ, աշակերտներն այդպիսով դրում են շարադրութիւններ: Վերջապէս այդ նպատակի համար գործ են դնում կ. կերպելի և Ա. Մօրաւովի «Четыре времени года» աշխատութիւնը, հրատ. Սիտինի ընկերութեան: Ճշմարիտ է, դրանք իրենց չափով փոքր են, որովհետև մի թերթի վրայ զետեղւած են մի քանի նկար, բայց լաւ են և նպատակայարմար թէ իրենց սիւժետով և թէ այլ կողմերից: *)

Վերջապէս այդ տեսակի աշխատանքների կարգին են պատկանում նաև Լ. Ն. Տօլստոյի մատնանշած շարադրութիւններն այն պատմւածքների, որ կազմւած է առուծներով: Բայց այդպիսի աշխատութիւններ կատարել կարող են միայն աւելի զարգացած աշակերտները: Սակայն մենք կարծում զնք, որ եթէ գործը յաջորդաբար, որոշ աստիճանաւորութեամբ տարւի՝ անցնելով աստիճանաբար կարդացած յօդւածների թէմաների մասին գըրւած շարադրութիւններից պատկերներով շարադրութիւն գրելուն,

*) Մեզանում ես վերջերս հրատարակած մի շարք հայերէն դասագրքերի մէջ առանձին ուշադրութիւն է դարձնում նկարների վրայ: Այդ կողմից առանձին հետաքրքրութեան արժանի է վերջերս Արշակ Զիլինգարեանի և Տիգրան Ռաշմանեանի կազմած «Դասընկեր» այրբենարան ընթերցարանը, որի մէջ, ի թիւս այլ հետաքրքիր նորութիւնների կան մի քանի մանուկների հետաքրքրութիւնը զարթեցնող և բովանդակալից գունատիպ պատկերներ: Յանկալի է, որ յաջորդ երկրորդ և երրորդ տարիների մեր դասագրքերի մէջ ևս լինին նկարներ, միայն այնպիսիները, որոնք ինչպէս բանաւոր, նոյնպէս և գրաւոր շարադրութեան նիւթ կարողանան ծառայել:

այն ժամանակ երրորդ, առաւել ևս չորրորդ տարւայ վերջը տարրական դպրոցում ես կարելի է համարձակ կերպով առաջարկել և. Ն. Տօլստոյի մատնանշածը գործադրել:

Ահա այն ուղին, որով պէտք է ընթանայ կարդալ զրելու գործը, որպէսզի մայրենի լեզուն իր բուն նպատակին հասնի. ահա այն բոլորը, որ կարելի եղաւ հաղորդել վերև առաջարած գրած գաղափարի գործնական կիրառման վերաբերմամբ:





ՀԵՂԻՆԱԿԻ ԱՅԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

1.	Տառապեալների ծառայ Ռոխը և Կոբած բարեկամը	15 կ.
2.	Ֆարիոլա	20 »
3.	Գիւղատնաեսական անհրաժեշտ գիտելիքներ	50 »
4.	Մեզւարուծութիւն	50 »
5.	Անասնապահութիւն և կաթնատնահսութիւն	40 »
6.	Սիրիսախտ	15 »
7.	Կենդանիների վարակիչ հիւանդութիւնները և եղջիւրաւոր անասունների ժամատախտ	8 »
8.	Սերմ և ցանք	25 »
9.	Հող և նըա մշակութիւնը	20 »
10.	Գաբաղ	10 »
11.	Մայրենի լիզեփ ուսուցումը	25 »

Գ Ի Ն Ն Ե 25 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիզ Կենտրոնական և Գուտաներերդ գրավաճառանոցները և հեղինակին «Հորիզոն»-ի խմբագրատունը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0248661

6688

